



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material



DLn
963

1999





ՍԿԶԲՆԱԿԱՆ

ԴԱՍԱԳԻՐԻ ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵՏՈԴՈՎ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ ԿՈՐՆԵԼԻՍԻ

ՏԵՏՐԱԿ Ա.




Հրատարակութիւն Ի. Տէր Միքայէլեանցի



Տ Փ Ր Ի Ս

Ի ՏՊԱՐԱՆԻ Հ. ԷՆԺԱՆՃԱՆՑ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.





ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ:

ТМОДЛУЪ 1865 ГОДА. 10-ГО ЦОНИ.

28. 965

4 963 - 60

Այս վերջին մի քանի տարիները բաւական միջկարգական ե-
ղան, մեր ուսումնարանների վերաբերութեամբ որովհետեւ այն-
տեղ, ուր վաղ միայն չոր ու ցամաք քերականական կանոններից
աւելի բան չէին ուսուցանում, այժմ արդէն սկսել են դաս տալ
գլխաւորութիւններ, մանաւանդ աւելի ընդհանրացած են ընդհանուր
աշխարհագրութեան և պատմութեան դասատուութիւնքը: Տեո-
նելով այս վիճակը ուսումնարանների և մի և նոյն ժամանակ ձեռ-
նարկու գրքերի պակասութիւնը, յանձն առի իբրեւ փորձ տպա-
գրել տալու Կոռնէլիոսի համառօտ, բայց ընտիր գրքոյկի թարգ-
մանութիւնը, իբրեւ ձեռնարկութիւն ընդհանուր աշխարհագրու-
թեան նախակրթարանների համար: Այս աշխատատիրութիւնը, որ-
չոր ամէն լեզուներով թարգմանւած է, ընդունւած է իբրեւ ամէնըն-
տիր ձեռնարկութիւններից մէկը, փոքրիկ երեխանց համար: Այս
հանգամանքը վստահութիւն տուեց ինձ ձեռնամուխ լինելու գրքոյ-
կիս տպագրութեանը, որնոր յոյս ունիմ, կդանէ ընդունելութիւն և
համակրութիւն մերերի մէջ էլ, որով խրախոյս կստանայ գրա-
վաճառանոցս հոգալու և այլ աւելի կատարեալ ու ընդարձակ դա-
սատու մատենաների տպագրութեան համար:

Տպագրւումէ միւս ևս տետրակը և վերջումը կը վնի ընդհա-
նուր աշխարհագրական քարտէս:

Ի . ՏԵՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆՅ



...the first month of the year ...
...the second month of the year ...
...the third month of the year ...
...the fourth month of the year ...
...the fifth month of the year ...
...the sixth month of the year ...
...the seventh month of the year ...
...the eighth month of the year ...
...the ninth month of the year ...
...the tenth month of the year ...
...the eleventh month of the year ...
...the twelfth month of the year ...
...the first month of the year ...
...the second month of the year ...
...the third month of the year ...
...the fourth month of the year ...
...the fifth month of the year ...
...the sixth month of the year ...
...the seventh month of the year ...
...the eighth month of the year ...
...the ninth month of the year ...
...the tenth month of the year ...
...the eleventh month of the year ...
...the twelfth month of the year ...

THE END OF THE WORLD



ԵՐԿՐԱԳՈՒՆԴԱՅ:



Մարդիկ բնակվում են գետի, լճի, ծովի կամ մի ուրիշ ջրի մօտ և այս պատճառաւ ամէնքը զիտեն , որ երկրիս մակերևոյթը բաղկանում է ջրից և հողից : Մարդս առանց օդի , ջրի և ցամաքի չի կարող ապրել :

Երկրից մարդս ստանում է այն ամէն բանը ինչ որ իրան հարկաւոր է , ուրեմն երկիրս մարդուն կերակրում է խմացնում է և հագցնում :

Մարդս ունեցել է ցանկութիւն իմանալ թէ երկրիս մակերևոյթի վերայ եղած ջուրը շատ է . ջրի քանակութիւնը ի՞նչ յարաբերութիւն ունի հողի քանակութեան հետ , երկիրս ի՞նչ ձև ունի . ի՞նչ կայ երկրիս վերայ , նրա ո՞ր մասումն է բնակվում մարդս և ի՞նչպէս է բնակվում :

Եթէ հազար տարիի չափ մարդիկ թերակատար հասկացողութիւն ունէին երկրիս ձևի վերայ և ժամանակ էլ կար , որ սրա մասին ծուռ կարծիքներ ունէին , որովհետեւ իւրաքանչիւր մարդ հիմնում էր իւր կարծիքը այն երևոյթներին վերայ , ինչ երևոյթներ նա նկատում էր մէկ տեղում :

Այնտեղ , որտեղ մենք բնակվում ենք , մեզ տալիարակ

է երևում և կարծես թէ երկինքը հեռու տեղումը միա-
նում է երկրի հետ: Այս կարծիքական երևոյթը մինչև
Վրիստոսի ծնունդը ընդունված էր իբրև մի ճշմարտութիւն:
Վերջում, երբոր նկատեցին թէ երկիրս ամէն տեղ տափա-
րակ է և երկինքն էլ ամէն տեղ երևում է մեզ կամարի
պէս, նկատեցին թէ արեգակի դուրս գալիս իսկոյն չէլու-
սաւորվում աշխարհս և թէ՛ լուսին, արեգակ և բոլոր ու-
րիշ երկնային մարմինները կոլոյ են, — եզրակացրին, որ եր-
կիրս էլ կոլոյ է, ինչպէս որ լուսինը, արեգակը և ուրիշ
երկնային լուսաւորները. և սա էլ, ինչպէս նրանք, գտնե-
վում է երկնքում: *Դադար օգտով:*

Այն գնտաձև մարմինները, որոնք շարժվում են երկնային
տարածութեան մէջ և իրանք իրանց լոյս չեն տալի, անուան-
վում են խաւար մարմիններ կամ մոլորակներ (планеты).
բայց արեգակի նման լոյս տուող մարմինները անուանվում
են աստղեր (звёзды): Ուրեմն երկիրս, որտեղ մենք կենում
ենք, է մոլորակ և արեգակը աւելի մօտիկ է մեր երկրին,
քան թէ միւս աստղերը: Արեգակը բոլոր աստղերից մեծ է
երևում մեզ, և լոյսն ու տաքութիւնը, որ դուրս են գա-
լիս նրանից, թւում են աւելի պարզ և աւելի զօրեղ մի-
այն այն պատճառաւ, որ երկիրս աւելի մօտիկ է արեգա-
կին, քան թէ ուրիշ աստղերին: Նուա՛ր բոլոր մոլորակնե-
րից աւելի մօտիկ է մեզ և այս պատճառաւ մեզ թւում

է որ նա ուրիշ մոլորակներէից աւելի մեծ է և նրա լոյսը աւելի զօրեղ :

Լուսնի մոլորակ լինելը նրանով է հաստատուում, որ մենք նրան դեռ ամբողջ լուաւորված ենք տեսնում, յետոյ կիսատ, յետոյ շատ քիչ լուաւորված և վերջապէս բոլորովին չենք տեսնում, որովհետեւ նա դէպի մեզ զարձնում է խաւար կողմը, որն որ արեգակի լուսով չէ լուաւորված : Ամէն նաւադնային այնպէս է թւում, թէ նրա նաւակը մի տեղում կանգնած է և ոչ թէ նաւակն է շարժվում, այլ նրա մօտ եղած ավերքը, տները, ծառերը և այլն, Նմանապէս, ամէն օր, նկատելով արեգակի և լուսնի շարժմանքը, մարդիկ երկար ժամանակ կարծում էին, թէ երկիրս մէկ տեղ կանգնած է երկնքում, իսկ արեգակը, լուսինն ու ուրիշ երկնային մարմինները պտտում են նորա շուրսի կողմը : Միայն վերջերումն նկատելով, որ բոլոր աստղերը անշարժ են և մոլորակները շարժվում են արեգակի շուրջ, հետեւացրին, որ արեգակը ուրիշ աստղերի պէս անշարժ է, իսկ երկիրս պտտում է արեգակի շուրջ ուրիշ մոլորակների նման :

Բացի աստղերից ու մոլորակներից երկնքումը էլի տեսնում ենք արբանեակներ (спутники) և կոմետներ կամ պոչաւոր աստղեր (кометы) .

Արբանեակ կոչվում է այնպիսի խաւար մարմինը, որ պտտում է մոլորակի շուրջ . օրինակի համար լուսինը երկրի

Համար արքանեակ է : Կոմեա—կամ պոչաւոր աստղ անուանւում է երկնային այն մարմինը , որի շրջանը մեզ երևում է իբրև անկանոն . սրանով վանազանւում է նա աստղերից , որոնք ունին կանոնաւոր շրջան : Բացի այս՝ նրա ետևից մի լուսաւոր գիծ է երևում , որին սովորաբար մենք պոչ ենք անուանում :

Երկրի մասին ճշմարիտ հասկացողութիւնները և տեղեկութիւնները մենք ասացել ենք հաւաքելով մէկ տեղ վաղաւան ճանապարհորդների պատմութիւնները ու նկարագրութիւնները :

Այս ամէնը հաւաքած ու մէկ կերպիւ դասաւորած տեղեկութիւնները կազմում են մի առանձին գիտութիւն , որ կոչւում է Աշխարհագրութիւն կամ Գեօգրաֆիա (География) :

Արեւն երկիրս է մոլորակ , գնտաձև , միւս երկնային մարմիններու նման , ունի արքանեակ այն է լուսին և ուրիշ մոլորակների պէս շարժւում է արեգակի շորսի կողմը :

Երկրի կողմերքը :

Տան մէջ պատերը , լուսամուտները , դռները են հաստառուն առարկաներ : Այս պատերը կարելի է անուանել աջակողմեան , ձախակողմեան , երեսի ու քամակի պատեր : Եթէ կամենում ենք ասել աթոռի դրութիւնը , կ'ասենք , որ նա դրած է աջակողմեան կամ ձախակողմեան պատի մօտ և այլն : Այսպէս էլ որոշւում են երկրիս վանազան մասերի

դրութիւնը, յաբաբերելով երկնքի հասաւտ տեղերին, որոնք
կոչվում են երկրի կողմեր (страны света) : Գլխաւոր կողմե-
րը չորս են . արեւելք, արեւմուտք, հիւսիս, հարաւ :
Արեւելք կոչվում է երկրի այն կողմը, որ կողմից դուրս է
գալի արեգակը . իսկ նրա հակառակ կողմը, որտեղ արե-
գակը մեր է մտնում, արեւմուտք է կոչվում : Եթէ երես-
ներս դէպի արեգակ դարձնենք, իսկ քամակը արեւմտքին, աջ
կողմը կը լինի հարաւ, իսկ ձախ կողմը հիւսիս : Այն բո-
լոր տեղերը, որոնք հիւսիսային կողմն են գտնվում, անուա-
նում ենք հիւսիսային կամ կէս գիշերեայ, իսկ հարաւային
կողմ գտնված երկիրները անուանում ենք հարաւային կամ
կէսօրեայ կամ միջօրէական : Արեւմտեան կողմ գտնվածներին
արեւմտեան կամ երեկոյեան . իսկ արեւելքի կողմումը եղած-
լներին արեւելեան կամ առաւօտեան : Երբոր մի թղթի,
տախտակի վերայ երկիրս ձևակերպում են կամ նկարում երկրի
ամէն մասերը, այնպէս է ընդունված, որ հիւսիսը վերևը
լինի, ուրեմն ներքինը կը լինի հարաւ, աջակողմեանը՝ արե-
ւելք, ձախակողմեանը՝ արեւմուտք :

Ամէն մէկ տեղի նկարագրելիս, նրա դրութիւնը աւելի
ճիշտ ցոյց տալու համար, բացի այս գլխաւոր չորս կող-
մերը, ուրիշ չորս՝ երկրորդական կողմեր էլ են նշանակել :
Հիւսիսային և արեւելեան կողմերի մէջ տեղ գտնված տեղը
ասվում է արեւելահիւսիս, հարաւի և արեւելքի մէջ գտն-
ված գծի ուղղութիւնը ասվում է արեւելահարաւ . հարաւի

և արևմտքի մէջ գտնվածը արևմտահարաւ, իսկ հիւսիսի
և արևմտքի մէջ — արևմտահիւսիս : Այս բոլոր ուղղութիւն-
ները երկրի կողմեր են անուանվում նոյնպէս :

Եթէ մի երկրի դրութիւնը խմանանք, այն ժամանակ
հեշտ է ցոյց տալ միւս երկրի դրութիւնը, զխտնալով վե-
րոյիշեալ ութ կողմերը :

Կողմերը խմանալու համար, ուրեմն և երկրների դրու-
թիւնը, մենք մէկ գործիք ունենք, որի անունն է կոզմոսցոյց
(КОМПАСЬ)։ Սա այնպիսի մի բան է, որի մէջ դտնված սրւա-
քի մէկ ծայրը միշտ դէպի հիւսիս է դարձած, իսկ միւսը
դէպի հարաւ : Սա էնդուր համար է պէտք գալի, որ արե-
գակը միշտ չի դուրս գալի, օրինակ ամառած օրերին, որ նը-
րանով խմանայինք երկրի կողմերը. այն ժամանակ այս գոր-
ծիքով մենք հեշտ կարողենք այն խմանալ :

Հինգ ուղիւիանոս և երկրի հինգ մասերը :

Երկրիս մակերևոյթի վերայ տեղեկութիւն տալու պատ-
կերացնում են նրան մի կողով արհեստական գնդակի վերայ,
որ զԼՕԲՕՍ (ГЛОБУСЬ) է անուանվում, կամ մի տափակ բանի
վերայ (Թղթի, տախտակի վերայ), որ աշխարհացոյց կամ
քարտէզ (карта) են անուանում : Ինչպէս որ վերևն ասացինք,
երկիրս լուսնի պէս կողով է (բուրթու կամ ապելսինի նման է)
և եթէ երկիրս մի տափարակ բանի վերայ նկարելու լինենք

և ուզենանք, որ բոլորովին նոյնը լինի ինչ երկրագնդիս վերայ է, պէտք է երկու բոլորակի (сферы) ձև տանք, որոնցից մէկի վերայ կը նկարվի այն, ինչ որ զանաւորւմ է երկրագնդի կէս մասումը, իսկ միւսի վերայ—ինչ որ միւս մասումը :

Այսպիսի աշխարհացուցին անուանում ենք կիսագնդի աշխարհացոյց (карта полушарія) : Նրանցից մէկը արեւելեան է կոչվում, իսկ միւսը արեւմտեան կիսագունդ : Այս աշխարհացուցի սպիտակ, մի քանի քարտէզների վերայ կապոյտ, գունով տեղը մեզ ցոյց է տալի երկրի մակերևոյթի այն մասը, որ ծածկված է ջրով, իսկ երկրի մակերևոյթի մնացած նկարած մասը է հող, որ աւելի բարձր լինելով ջրի մակերևոյթից՝ չի թրչվում ծովով, բայց մնում է ինչպէս մէկ ցամաք տեղ, որ այս պատճառաւ ցամաք է անուանվում (суша) : Եթէ քարտէզին նայենք, կը տեսնենք, որ ցամաքի մակերևոյթը փոքր է ջրի մակերևոյթից : Երկրիս ցամաքային մասը կը տեսնենք որ բաղկացած է մի քանի մեծ մեծ կտորներից, որոնք մէկ մէկից ջրով բաժանած են, այնպէս որ մարդս մի կտորից միւս կտորը չի կարող անմիջապէս ցամաքով անցնել : Այս կտորները անուանում ենք երկրի ցամաքներ (материки), ինչպէս քարտէզի վերայ տեսնում էք այս հետևեալ կտորները . 1) Արեւմտեան ցամաք կամ Նոր Աշխարհ, 2) Արեւելեան ցամաք կամ Հին Աշխարհ, 3) Արեւելահարաւային կամ Աւստրալիա և 4) Հարաւային կամ Բևեռային ցամաք : Այն բոլոր ջրերը, որ սրանց շրջապա-

տում են, ովկիանոս են անուանում և հարթ հաւասար մակերևոյթ են կազմում, որի վերայ մարդս կարող է նաւով մանգալ և ամէն մէկ ցամաքի շուրջ պտտել: Այս ուկիանոսի ամենահեռաւոր մասերն անգամ հաղորդակցութիւն ունին միմեանց հետ: Բայց որովհետեւ այդ մասերը մարդիկ զանազան ժամանակն են գտել և ովկիանոսներն էլ զանազան երևոյթներ են ցոյց տալի մարդուս, այդ պատճառաւ զանազան անուաններ են տուել նրանց, այն է՝ Հիւսիսային, Ատլանտեան, Հարաւային, Մեծ և Հնդկական, Սրանք ուրիշ անուաններ էլ ունին այն է Ատլանտեանը կոչվում է Արեւմտեան, Մեծը՝ Արեւելեան կամ Խաղաղ, Հիւսիսայինը՝ Հիւսիսային Սառուցեալ և Հարաւայինը՝ Հարաւային Սառուցեալ ովկիանոսներ, որովհետեւ սրանք տարուայ մեծ մասը ծածկված են բոլորովին սառուցով: Գամաքները, որոնք բաժանված են միմեանցից մեծ մեծ ովկիանոսներով, հինգ հատ են. Եւրոպա (Европа), Ասիա (Азія), Ափրիկա (Африка), Աւստրալիա (Австралія) և Ամերիկա (Америка):

Այս կերպիւ որոշում են երկրի հինգ ովկիանոսն ու ցամաքները, որոնց դէպի միմեանց յարաբերութիւնները պէտք է այնքան լաւ նկատէք քարտեզի վերայ, որ կարողանաք բերանացի պատմել: Եւրոպա, Ասիա և Ափրիկա, որոնք մէկ ցամաքի կտորներ են, կապված են միմեանց հետ ցամաքով. Ամերիկա և Ավստրալիա ընդհակառակն կղզիներ են, այսինքն այնպիսի տեղեր, որ մենք կարող ենք միայն ջրով դնալ այն տեղը (շոգեհաւով կամ նաւաստորմիկով):

Տեղերի դրութիւնը նրանց մեծութիւնը ու հե- ռաւորութիւնը :

Ճիշտ որոշելու համար ընդունոված է քարտէզի վերայ
գծեր անցկացնել, որոնց դրութիւնը հաստատ ու անփոփոխ
լինի : Այսպիսի հիմնաւոր գծերը երկու են . մէկից հաշ-
վում են հեռաւորութիւնը դէպի հիւսիս, իսկ միւսից դէպի
հարաւ . առաջինը կոչվում է հասարակած (Экваторь), երկ-
րորդը միջորէական (Меридиань) :

ՀԱՍՍԱՐԱԿԱԾ . Քարտէզի լենքի վերայ քաշած է մէկ գիծ ,
որի ծայրերին դրած են 0—0 . և որ անց է կենում երկու
կիսագնդի մէջ տեղով այնպէս , որ իւրաքանչիւր կիսագուն-
դը բաժանում է երկու հաւասար մասը այն է՝ հիւսիսային
և հարաւային , ուրեմն և երկրի մակերևոյթը բաժանվում
է նրանով երկու կիսագունդ . հիւսիսային և հարաւային
Այս գիծը կոչվում է հասարակած կամ էկուատոր և որ տեղեր-
քով սա անցնում է , գիշերն ու ցերեկը հաւասար են մի-
մեանց , այսինքն արեգակը միշտ առաւօտուայ սհաթի 6-ին է
դուրս գալի և երեկոյեան 6-ին մեր է մտնում : Իսկ հասարա-
կածից դէպի հիւսիս և դէպի հարաւ զտնված տեղերումը
տարին միայն երկու անգամ է լինում այս հաւասարութիւնը .
ուրիշ ժամանակները երբեմն օրերը կարճ են լինում , երբեմն
երկար և ինչքան որ մէկ տեղը հասարակածից հեռացած
լինի , այնքան էլ մեծ կը լինի այս զանազանութիւնը , այն-

պէս որ եթէ մենք հասարակածից բոլորովին հեռանանք, կը հասնենք մի այնպիսի կէտը, որ անուանուած է բեռ (полюс), ուր կէս տարի լինում է ցերեկ և կէս տարի գիշեր: Գիշերուայ կամ ցերեկուայ երկարութիւնը կամ կարճութիւնը իմացել են ճանապարհորդների պատմածներից կամ քննութիւններից:

Ամէն մարդու յայտնի է որ ցերեկուայ մեծութիւնը մեծ նշանակութիւն ունի մարդու համար, որովհետեւ նրա մեծութիւնից կախված է տաքութիւնը. ամենից երկար օրերը լինում են ամառը և տաքուայ ամենատաք ժամանակն էլ ամառն է, ընդ հակառակն կարճ օրերը լինում են ձմեռը և տաքուայ ամենացուրտ օրերն էլ ձմեռն է: Այս այսպէս էլ պէտք է լինի, որովհետեւ երկիրս իւր լուսն ու տաքութիւնը ստանում է արեգակից. քանի որ արեգակը մէջ տեղը երկար ժամանակ լուսաւորէ, այնքան այն տեղը շատ պէտք է տաքանայ: Երբոր արեգակը լուսաւորում է, այն ժամանակ երկիրս, աւազը, ջուրը, ծառերը բոլորը տաքնում է, ընդունում է իւր մէջ տաքութիւն. երբ արեգակը չի տաքցնում այս առարկաները, նրանք սառում են և բաց են թողնում այն ընդունած տաքութիւնը: Այսպէս երկիրս ցերեկով տաքանում է, գիշերով սառում: Տաքութեան նշանակութիւնը ամէն մարդ գիտէ. առանց նրան, ո՛չ բոյս, ո՛չ թուփ, ո՛չ ծառերը չեն կարող ո՛չ ծաղկել և ո՛չ պտուղ բերել, ինչպէս որ ձմեռն է լինում:

Արեգակի ճառագայթների ուղղութիւնը աւելի մեծ նշանակութիւն ունի երկրիս տաքնալու համար, քան թէ ցերեկի երկայնութիւնը: Այն ճառագայթները որ ուղիղ են ընկնում տաքացնում են աւելի քան թէ ծուռը (թեքուած) ընկնողները. ինչպէս վառած վառարանի (բուխարի) ուղիղ դէմը կանգնես աւելի տաքութիւն կը գգաս, քան թէ կողկիցը: Միևնոյնը պէտք է ասել երկրի մակերևոյթի վերայ արեգակի ճառագայթների մասին. կէսօրեայ ժամանակին արեգակը բարձրացած է լինում, նրա ճառագայթները քաշ են ընկած և աւելի են տաքացնում: Որտեղ ճառագայթները աւելի են քաշընկած, այնտեղը պէտք է աւելի տաք լինի: Թէ ճառագայթները ո՞րքան են թեքած, մենք այդ կարող ենք իմանալ լուսաւորած առարկայից կէսօրեայ ժամանակ ստացած շուաքից. քանի շուաքը երկայն լինի, այնքան նշանակում է ճառագայթները թեքուած են: Հասարակածի երկու կողմն էլ $23\frac{1}{3}^{\circ}$ հեռաւորութեան վերայ գտնվում են ամենատաք երկիրները, որոնք ինչպէս մէկ գօտի շրջապատում են եկիրին և այս պատճառաւ երկրի այս մասը կոչվում է այրեցեալ գօտի (Жаркий полъ), ուր արեգակը տարուայ մէջ երկու անգամ լուսաւորում է և արեգակները ուղղահայեաց ճառագայթներով, այսինքն ուղիղ մարդու գլխի վերայ է լինում կանգնած և այս պատճառաւ մարդս շուաք չի ունենում: Այս տաք երկիրները նոյնպէս կոչվում են արեգատրձի երկիրներ (тропическими

странами), որովհետեւ այն գիծերը, որոնք բաժանում են նրանց մօտիկ եղած երկիրներէք, ասելում են արեւադարձի գծեր (тропики) : Այրեցեալ գօտիից դէպի հիւսիս և դէպի հարաւ արեւադարձի գծերից միւս կողմը գտնվում են բարեխառն գօտիներ (умеренные поясы) : Այստեղ գտնված երկիրներում թէպէտ ամէն օր (24 ժամ) արեւակը դուրս է գալի և ցերեկ լինում է ամէն տեղ, բայց տարուայ մէջ ոչ մի անգամ արեւակը գլխին չի լինում կանգնած, նրա ճառագայթները երբեք ուղղահայեաց չեն և բոլոր առարկաները կեսօրէին էլ միշտ շուաք սալիս են : Այս պատճառաւ բարեխառն գօտիների մէջ աւելի ցուրտ է : Բայց կան երկիրներ, ուր արեւակը ամէն օր չի դուրս գալի, այսինքն ամէն օր չէ տաքանում երկիրս և ուրեմն այն տեղ աւելի ցուրտ պէտք է լինի : Այս երկիրները կազմում են սառուցեայ գօտի (холодный пояс) և որովհետեւ այս երկիրները բնակչների մօտ են, այս պատճառաւ կոչվում են բնակաշրջին երկիրներ. հիւսիսային և հարաւային, իսկ այն գիծերը, որոնք բաժանում են բարեխառն գօտին սառուցեայ գօտից, կոչվում են բնակաշրջի շրջաններ (полярные круги).

Ուրեմն հինգ գօտի գիտենք. մէկ այրեցեալ կամ տաք, երկու բարեխառն այն է հիւսիսային և հարաւային և երեւո սառուցեայ կամ սառը այն է հիւսիսային և հարաւային :

Մէկ կօլով գնդի մեծութեան չափը հասկանալու համար և կամ նրա վերայ գտնված երկու կէտի հեռաւորութիւնը

ցոյց տալու համար, անց են կացնում շրջապատող դժեք (неудовольств) և նրանցմով չափում: Նմանապէս այսպիսի գծեր անցեն կացնում քարտէսների և գլոբուսների վերայ, որոնք մեր երկիրն են պատկերացնում, և այսպէս երկրի վերայ առած երկու կէտի հեռաւորութիւնը կը կազմէ աղեղը (շրջապատի մասը), որ երկու կէտի մէջ է:

Ահասարակ աղեղի երկայնութիւնը ձևացնում են նրա մէջ բովանդակված աստիճանների թւով: Մէկ աստիճանը մէկ շրջապատ գծի $\frac{1}{360}$ մասն է: Ի հարկէ փոքր շրջապատի աստիճանը փոքր կը լինի, մեծինը մեծ: Հասարակած գծի 1 աստիճանը հաւասարվում է 105 վերստի (15 գերմ. կամ աշխարհ. մղ. որի ամէն մէկը ունի 7 վերստ): Միևնոյն մեծութիւնն ունի միջօրէական շրջանի աստիճանը:

ՄԻՋՕՐԷԱԿԱՆ ՆԵՐ: Հասարակածից դէպի հիւսիս և դէպի հարաւ չափելու համար ամենևին ուրիշ քան թէ հասարակածը ուղղութիւնով քաշում են գծեր, այն է՝ անց են կացնում երկու բևեռի միջով: Այս գծերը կոչվում են Մերիդեան կամ Միջօրէական (меридиан), որովհետև սրանց անցկացած տեղերումը միշտ միևնոյն ժամանակն է լինում կէս օրը:

Ամէն մէկ միջօրէականը, իբրև շրջապատ գծի մի կէս, ունի 180 աստիճան, իսկ հաշուել սկսում են հասարակածից դէպի հիւսիս և հարաւ 0-ից մինչև 90: Այսպէս թէ մէկ տեղի մասին ասած է թէ նա դնւում է $23\frac{1}{2}^{\circ}$

Հիւս . լայն . նշանակում է այն տեղը հասարակածից դէպի
 Հիւսիս դանվում է $23\frac{1}{2}^{\circ}$ հեռաւորութեան վերայ . եթէ
 ասած է որ դանվում է նա 25° հարաւային լայնութ . —
 նշանակում է հասարակածից դէպի հարաւ 25° հեռաւո-
 րութեան վերայ է դանվում յիշած տեղը : Իսկ սրանց մէջ
 գտնված զուգահեռական գծերի թիւը ցոյց կը տայ մեզ մի-
 ջորէականը :

Որովհետեւ բոլոր միջօրէականները հաւասար են միմեանց
 և հաւասար համարեալ հասարակած գծին , այս պատճառ-
 աւ և աստիճանները միմեանց հաւասար են (ամէն մէկը
 105 վերստ) և ուրեմն եթէ քարտէզը այս բաժանմունքներ
 ունի և մեր աչքի առաջն են , դժուարութիւն չենք դրաւ
 մէկ միջօրէականի երկու կէտի հեռաւորութիւնը վերաւոյ
 իմանալու : Յայտնի է որ արեւադարձները անցնում են $23\frac{1}{2}^{\circ}$
 հեռաւորութեամբ հասարակածից , իսկ բևեռային շրջան-
 ները անցնում են նոյն հեռաւորութեամբ բևեռներից
 և ուրեմն դժուար չէ հաշուել , որ ամէն մէկ կիսագնդի
 մէջ տաք կամ այրեցեալ գօտին ունի $2467\frac{1}{2}$ վերստ լայ-
 նութիւն (երկու կիսագնդի մէջ մօտ 5000 վերստի) , իսկ
 սառուցեալ գօտին տարածվում է բևեռից ամէն կողմը նոյն
 հեռաւորութեամբ : Յետոյ ամէն մէկ բարեխառն գօտի բըւ-
 նած ունի 43° աստիճան լայնութիւնը ($90^{\circ} - 47$) կամ
 105 վերստ $\times 43 =$ մօտ 4515 վերստ :

Մէկ տեղե դէպի արեւելք և դէպի արեւմուտք ունեցած

դրութիւնը ցոյց տալու ընդունւած է նշանակել աւտիճան-
ների թւով սկսած առաջին միջորէականից:

Այս առաջին միջորէականը անց են կացնում Աֆրիկայի
արեւմտեան ափի մօտ և սա բաժանում է երկիրս երկու
կիսագունդ , արեւելեան և արեւմտեան : Աւտիճանների հա-
մարելը կամ սկսում են հաշուելով դէպի արեւելք միայն ,
0-ից մինչև 360⁰ շարունակաբար , և կամ հաշուելով եր-
կու կողմիցն էլ ու հասնելով , 0-ից մինչև 180 աւտիճանը



Բնութանական աշխարհագրութեան մէջ գործածական բառերի մեկնութիւնը : Յամաքի մասերը :

Ամէն մարդ գիտէ , որ ջուրը , որովհետեւ շարժական մասերից է բաղկացած այսինքն նրա մասերի միմեանց հետ ունեցած միաւորութիւնը փոքր է , այս պատճառաւ նա ստանում է այնպիսի ձև , ինչպէսի ձև ունի ամանը , որի մէջ նա ամփոփած է և նրա երեսը , որ ամանի պատին չի կրպած , ստանում է հորիզոնական մակերևոյթ :

Ջրի մասերի շարժական լինելը ամէն մարդ կը լինի նկատած . մեծ անձրևի ժամանակ եկած ջուրը անպատճառ բարձր տեղից վազում է դէպի աւելի ցածր տեղերը և հաւաքւում է փոսերում : Միևնոյն պատճառներից կախած են այն երևոյթները , որ մենք նկատում ենք երկրագնդի մակերևոյթի վերայ աւելի ընդարձակ կերպիւ : Զանազանութիւնը նրանումն է , որ մէկ ժամանակ երկրի մակերևոյթի վերայ մեծ բազմութեամբ եկած ջրերը , չեն ցամաքում ինչպէս ջրալից փոսերը , այլ բռնած ունին միշտ միևնոյն ցածրնկած տեղերը և այն առաջուպ եկած ջրերը այնքան շատ են , որ բռնած ունին երկրի $\frac{3}{4}$ մակերևոյթը և կազմում են մի առանձին լայնատարած ովկիանոս , որին մարդս զանազան տեղերում զանազան անուններ է տուել : Այս մարդու համար անասհման ջրի մակերևոյթի վերայ մենք նկատում ենք աւելի բարձրացած տեղեր , ամէն կողմից ջր-

րով պատած , որին անուանում ենք ցամաք , որ երբէք ջրով չի ծածկւում : Այս ցամաքի մասերի մեծութիւնները զանազան են . չորս մեծ ցամաքներ կան (արեւմտեան , արեւելեան , արեւելահարաւային և հարաւոյ — բևեռային) , մնացած փոքրիկ մասերը կոչւում են կղզիներ : Երբեմն երկու ցամաքի մէջ բարձրացած հողը նեղ ցամաքային միաւորութիւն է շինում , այնպէս որ մէկ ցամաքից միւս ցամաք կարող ենք անցնել այն նեղ մասով . այսպիսի նեղ ցամաքային երկու ցամաք միաւորող մասը կոչւում է պարանոց . բայց ցամաքի մի մասը , որ համարեալ թէ ամէն կողմից ջրով պատած է , կոչւում է թերակղզի :

Երկրի այն մասը , որտեղ նա ջրի սահման է կազմում , կոչւում է ափն : Գամաքի ամենահեռաւոր ծայրը , որ ջրի մէջ մտնում է և ցամաքի վերջաւորութիւն է կազմում կոչւում է հրաւանդան :

Ուրեմն ուշադրութիւն դարձնելով ցամաքի մասերի դրժագրութեան վերայ , զանազանում են . կղզիներ , թերակղզիներ , պարանոցներ և հրաւանդաններ : Սրա նման մասերը , 'ի հարկէ աւելի փոքրիկ ձևով , ձեզանից ամէն մէկը կարող է նկատել իւր պարտեզումը կամ դաշտումը մեծ անձրև գալուց յետոյ :

Հ. Ի՞նչ է քարտէզ (Карта):

Պ. Քարտէզ անուանւում է մէկ այնպիսի թուղթ , որի վերայ նկարած է երկրիս մակերևոյթը կամ նրա մի մասը

և ցոյց է տալի թէ զանազան մասերի դրո թիւնը և թէ այն մասերի մեծ ու փոքր լինելը այսինքն յարաբերութիւնը:

Հ. Ի՞նչ է *ցամաք* (материк):

Պ. *Ցամաք* անուանւում է մէկ մեծ հողի կտոր, որ պատած է ջրով:

Հ. Ի՞նչ է *կղզի* (остров):

Պ. *Կղզի* անուանւում է ցամաքի մէկ փոքրիկ կտոր, որ պատած է ամէն կողմից ջրով, ինչպէս էլ ցամաքն է, բայց զանազանւում է նրանով, որ նա ցամաքից շատ և շատ փոքր է:

Հ. Ի՞նչ է *թերակղզի* (полуостров):

Պ. *Թերակղզի* անուանւում է ցամաքի մէկ մասը, որ ամէն կողմից ջրով չէ պատած:

Հ. Ի՞նչով է զանազանւում *կղզին* *թերակղզուց*:

Պ. *Կղզին* ամէն կողմից պատած է ջրով, իսկ *թերակղզին* մէկ կողմից միաւորութիւն ունի ցամաքի հետ:

Հ. Ի՞նչ է *ափը* (берег):

Պ. *Ափն* է այն մասը որով ցամաքը կպչում է ջրին և սահման է դնում նրան. ի հարկ է ափը ջրի մակերևոյթից այսինքն երեսից բարձր է:

Հ. Ի՞նչ է *լեռն* (гора):

Պ. *Լեռն* անուանւում է երկրիս մակերևոյթից բարձրացած հողէ կամ քարէ բարձրութիւնը:

Հ. Ի՞նչ է *շղթայ լեռանց* (хребетъ или цѣпь горъ):

- Պ. Երբոր շատ կամ քանի մի լեռներ միասին են լինում
և մէկմէկու հետ մեծ կամ փոքր բարձրութիւններով
միաւորութիւն ունին, այն ժամանակ նրանք կազմում
են շղթայ լեռանց։
- Հ. Ի՞նչ է դաշտ (равнина)։
- Պ. Դաշտ անուանւում է մէկ մեծ հարթ հաւասար տեղ։
- Հ. Ինչ է անապատ (степь)։
- Պ. Այնպիսի հարթ—հաւասար տեղ է, որի մակերևոյթը
բաղկացած է աւաղից։
- Հ. Ի՞նչ է մարգագետին (лугъ)։
- Պ. Սա այնպիսի մի դաշտ է, որ տեղ մեծ բուսականութիւն
կայ և այս պատճառաւ շատ յարմար արածելու տեղ
է ոչխարի ու տաւրի համար։
- Հ. Ի՞նչ է հրաբուղի (вулканъ или огнедышащая гора)։
- Պ. Հրաբուղի անուանւում է այնպիսի լեռը որի ծայրը
կամ նրա մէկ կողմը ծակված է և այն ծակից երբեմն
դուրս են գալի ծուխ և բոց։
- Հ. Ի՞նչպէս են կոչւում լեռան մասերը։
- Պ. Լեռան ծայրը կոչւում է գագաթ (вершина)․ որտեղից
սկսում է լեռոն բարձրանալ, այն տեղը կոչւում է ստո-
րոտ (подножье), իսկ այն զառի վայր մասերը, որով պէտք
է բարձրանալ կոչւում են լեռան փեշերը։
- Հ. Ի՞նչ է պարանոց (перешеекъ)։
- Պ. Պարանոց անուանւում է ցամաքի այն փոքրիկ ու նեղ

մասը, որով կամ թերակղզին միաւորվում է ցամաքի հետ կամ մի ցամաքը միաւորվում է միւսի հետ :

Հ. Ուրեմն երկրի բնական մասերը ի՞նչ անուններ ունին :

Պ. Գամաք, կղզի, թերակղզի, ավիը, լեռուն, շղթայ լեռանց, դաշտ, անապատ, մարգագետին, հրաբուխ, պարանոց :

Հ. Ի՞նչ է հրուանդան (мысль, оронечность) :

Պ. Հրուանդան կոչվում է ցամաքի ամենահեռաւոր ծայրը, որով նա վերջանում է ծովը մտնելով :

Ջրի մասերը:

Եթէ մենք ուշադրութիւն դարձնենք ջրերի դասակարգութեանց վերայ, կը տեսնենք որ տեղտեղ ովկիանոսի ջրերը շատ հեռու տեղ կտրել հողը մտել են ցամաքի մասերի արանքումը, ծածկելով դաշտավայր տեղը ջրով : Ովկիանոսի այսպիսի մասերը որ ցամաքի ավերի մօտ են թէ որ շատ մեծ են — ծով են կոչվում, թէ որ փոքր են — ծոց են անուանվում : Երբեմն ծովը կամ ծոցը միաւորվում է նեղ ջրի մասով կամ ովկիանոսի հետ կամ մի ուրիշ ծովի հետ, այն ժամանակ այսպիսի միաւորող ջրի մասը կոչվում է նեղուց :

Բացի ովկիանոսի այս մասերը որ ջրում են ցամաքի արանքը և այս պատճառաւ կոչվում են արտաքին ջրեր կան և ուրիշ մասեր, որ կոչվում են ներքին ջրեր :

Եթէ մենք պատկերացնենք մեզի փոքր ձևով օրինակ պարտեզի մէջ կամ մեծ ձևով — երկրիս մակերևոյթի վերայ . այս միւսնոյն է , եթէ պատկերացնենք ասում եմ մի փոս- ընկած տեղ , այն ժամանակ հասկանալի է որ անձրևի կա- թիլները կամ հալվող ձնի կաթիլները կը վազեն ջրջապատ աւելի բարձր տեղերից դէպի այս փոսը և կը հաւաքուին նրա մէջ : Եթէ մի այսպիսի փոսընկած տեղում շատ ջուր լինի հաւաքված , որ ուրեմն չորս կողմից հոգով կը լինի պա- տած , այն ժամանակ նա կ'անուանվի լիճ : Եթէ այսպիսի մի լճի մէջ շատ տեղից ջրեր լինին հաւաքուում , այնպէս որ բոլորովին փոս ընկած տեղը լքցվի և էլ տեղ չը լինի , այն ժամանակ աւելի ջուրը դուրս կը թափվի լճից , ճա- նապարհ կը գտնէ իւր համար և կըսկի վազել աւելի ցածր տեղով , մինչև որ հասնի կամ ովկիանոսը , կամ ծովը և կամ կորչի գետնի մէջ ծծվելով : Այսպիսի մի վազող ջուրը իւր բոլոր ընթացքով կոչվում է գետ : Բայց գետերի կազմ- վելը միշտ այսպէս չի լինում : Այնպէս պատահում է որ ջրի կաթիլները վազում են բարձր տեղերից , բայց ճանա- պարհին նրանք փոսընկած տեղեր չեն գտնում : Այս ժա- մանակ նրանք կազմում են ատուակներ , այսպիսի ատուակ- ները յառաջ գնալով պատահում են միմեանց , միաւոր- վում են և կազմում են տառներ , որոնք միաւորվելով կազմում են վտակներ , փոքրիկ գետեր և սրանք էլ յառաջ գնալով էլ աւելի միաւորվելով կազմում են գետեր և այս-

պէս քանի գետը յառաջ է վազում, այնքան նրա ջուրը շատանում է, այնքան գետը լայնանում է : Ուրեմն մեծ գետը բաղկանում է, կազմվում է փոքր գետերից, այսինքն կողքերից գլխաւոր գետը ընդունում է երկրորդական գետեր : Հասկանալի է որ մեր պատկերացրած գետը նման է մի ծառի ճիւղին, որ քանի զնում է, հաստանում է : Ինչպէս էլ մարդս ծառի մէջ զանազանում է ստեղմն (СТБИТ) երկրորդական ճիւղերից, նոյնպէս նա երկրորդական գետերը զանազանում է (որոշում է) գլխաւոր գետից և ուշադրութիւն է դարձնում թէ ո՞ր կողմից է երկրորդական գետը թափվում գլխաւորի մէջ : Ափերիցն էլ մէկը աջակողմեան և միւսը ձախակողմեան է կոչվում : Ընդունված է անուանել աջակողմեան այն ափը որ մեր աջ ձեռի կողմն է ընկնում եթէ կանգնենք երեսը դարձուցած դէպի այն կողմը, որ կողմը գետը վազում է :

Այսպէս երկրի մակերևոյթի վերայ որոշում ենք արտաքին ջրեր որք են. ովկիանոսը իւր մասերով, ծովերով, ծոցերով, նեղուցներով և ներքին ջրեր, որք են. լճերը և գետերը : Գետերի մէջ որոշում են ներքին գետերը, որ իրանց ջրերը չեն թափում ծովը, իսկական գետերից, որոնք ուրիշ ջրերի միջնորդութեամբ և կամ անմիջապէս թափում են իրանց ջրերը ովկիանոսը :

Հ. Ի՞նչ է ովկիանոս (Океан) :

Պ. Ովկիանոսն է շատ մեծ տարածութիւնով ջուր :

Հ. Ի՞նչ է ծով (more) :

Պ. Ծով անուանվում է ովկիանոսի մի մասը, որ սահմանափակուած է այսինքն առանձնացած է ցամաքի ավերով կամ շարած կղզիներով :

Հ. Ի՞նչ է ծոց կամ ծովածոց (заливъ) :

Պ. Աս ծովի այն մասն է որ կարծես թէ ցամաքի մէջ հեռու մտնում է : Կամ ծոց անուանվում է ծովի այն մասը, որ առանձնացել է ցամաքի ավերով և այսպէս ովկիանոսի առանձնացած մասը կոչվում է ծով, իսկ ծովի առանձնացած մասը — ծոց :

Հ. Ի՞նչ է գետ (рѣка) :

Պ. Գետ անուանվում է քաղցր ջրի հաւաքումը, որ խորընկած տեղովը վազում է ցամաքի վերայ :

Հ. Ի՞նչ է բերան գետոյ (устье) :

Պ. Գետի այն մասն է, որտեղ նա լայնանալով թափում է իւր ջրերը ծովը :

Հ. Ի՞նչ է սկիզբն գետոյ (истокъ или в роуве рѣки) :

Պ. Գետի սկզբնաւորութիւնն է :

Հ. Ի՞նչ է նեղուց (проливъ) :

Պ. Նեղուց ասում են այն ջրին, որ երկու (ջուր) ծով միմեանց հետ միացնելով բաժանում է երկու ցամաք միմեանցից :

Հ. Ի՞նչ է ջրանցք (каналъ) :

Պ. Այսպէս անուանվում են զխողովքամբ փորած եր-

կարաձիք խոր փոսերը, որ ջրով լքցնում են նաւադնացութեան համար: Եթէ ջրանցքը միաւորում է երկու գետ, երկու լիճ մէկ խօւքով երկու ջուր, այն ժամանակ այսպիսի ջրանցքը կոչվում է միաւորող ջրանցք (Соединительный канал):

Հ. Ի՞նչ է լիճ (озеро):

Պ. Լիճ անուանվում է այնպիսի ջուր, որ մեծ բազմութեամբ մէկ փոս ընկած տեղում հաւաքվել է անձրևի հոսանքից կամ աղբիւրներից: Երբեմն նա ամէն կողմից պատած է հողով, իսկ երբեմն մի փոքրիկ առուակով միանում է ուրիշ հաւաքած ջրերի հետ:

Հ. Ի՞նչպէս են կազմվում գետերը:

Պ. Գետերը կազմվում են լճերից կամ ջրի հոսանքից, որոնք բարձր տեղերից դէպի ցածր տեղերն են վազում (եկած անձրևի ջուրը կամ հալվող ձիւներ):

Հ. Ուրեմն ջրի վանապան մասերը ի՞նչ անուններ ունին:

Պ. Ովկիանոս, ծով, ծոց, գետ, բերան գետոյ, սկիւզն գետոյ, նեղուց, ջրանցք, լիճ:

Ովկիանոս և նրա զլխաւոր մասերը:

Մինչև կողմնացուցի (компасъ) գտնվելը և նաւադնացութեան մէջ կատարելագործվելը ովկիանոսները բաժանում էին աշխարհի մասերը այնպէս, որ մէկ մասի բնակիչները չէին կարող անցնել միւս մասը կամ մէկ մասի բնակիչները չէին

իմանում թէ միւս մասումը բնակիչներ կ'են արդեօք : Բայց 14-դ դարից սկսած , երբ գործ դրվեց կողմնացոյցը և առաւել վերջին դարումն շոգենաւ գործածելից յետոյ կարելի է աւել թէ ովկիանոսները էլ չեն բաժանում երկրի մասերը միմեանցից , այլ ընդ հակառակն միաւորումն ներանք այս մասերը , թեթեւացնելով ճանապարհորդութիւնը կամ զանազան ծանրութեանց տեղավոխութիւնները : Այժմ ցամաքային ճանապարհորդութիւնը աւելի շատ դժուարութիւններ և անյարմարութիւններ է ներկայացնում , քան թէ ծովայինը :

Ովկիանոսները երկրի զանազան մասերի ափերում կազմում են զանազան ծովեր , ծոցեր և նեղուցներ , որ այնքան աւելի օգտաւէտ են մարդու համար , որքան աւելի նրանք մոնում են ցամաքի մէջ և որքան շատ բերքեր ունին ինչպէս ովկիանոսները , նոյնպէս և նրանցմով ջրված տեղերը : Այս պատճառաւ ամէն մէկ ովկիանոսի նկարագրելիս ուշադրութիւն են դարձնում նրա զանազան դատիներում զանազան դրութիւն ունենալուն վերայ և նրա այն մասերի վերայ , որոնցմով ջրվում են ցամաքի ափերը :

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՈՒՅԵԱՅ ՈՎԿԻԱՆՈՍԱՐ (Северный ледовитый океанъ) , որ պատում է հիւսիսային բևեռը մինչև բևեռային շրջանները , կազմում է հին և նոր աշխարհի ափերի մօտ շատ սակաւ ծովեր և ծոցեր : Նրանցից Սպիտակ ծովը (Եւրոպայի ափերի մօտ) և Գուտզոնեան ծո-

ցը (Ամերիկայի ավերի մօտ) գտնվում են բարեխառն գօտիի մէջ. ֆնացած բոլոր մասերը (Օբի, Էնիսէյի, Լենայի բերանը, Բաֆֆինեան ծոցը և Հիւսիսային նեղուցների ծովը— Հիւսիսային Ամերիկայի մօտ) գտնվում են սառը գօտիի մէջ։ Այս ովկիանոսի անունը — սառուցեայ—ցոց է տալիս սրա բնաւորութիւնը. այստեղ սառուցները կամ ամենեւին պատում են անընդհատ կամ ահագին սառուցեայ սարեր լող տալիս են ըլում այնքան շատ թւով, որ բոլորովին վտանգաւոր են շինում այստեղ նաւագնացութիւնը։ Շատ անգամ պատահել է որ այսպիսի սառուցեայ սարերը զցել են իրանց մէջ տեղ նաւը և սեղմելով փշտել են։ Ահա ի՞նչ պատճառաւ մինչև այժմ մարդիկ ոչ միայն չեն եղել բերանի մօտ, այլ և չեն վստահացել մօտենալ ևս։ Հիւսիսային նեղուցների ծովը, որ գտնվում է շատ կղզիներու մէջ տեղումը (Հիւսիս. Գէորգայ կղզ.) Հիւսիսային Ամերիկայի ավերի մօտ, համարեա ամբողջ տարի կապած է լինում սառուցով։ Նրա վանազան մասերը և նեղուցները բացվում են հազիւ թէ մի քանի շաբաթ ժամանակաւ ամառը, ընդ նմին այս ամէն տարի կամ մի նշանակեալ ժամանակին չի պատահում, այնպէս որ մինչև ցայժմ յայտնի չէ թէ երբ կարելի է Հիւսիսային Ամերիկայի այս ավերովը անցնել։ Աւելի շատ մտնեկած մասերը Գելիսի, Հուդզոնի և Բաֆֆինի նեղուցներն են, որոնք Ամերիկայի ավերի մօտերէն են գտնվում։ Նոյնպէս լաւ մտնեկած են Սառուցեայ

ովկիանոսի այն մասերը, որոնք գտնվում են Եւրոպայի ու Ամերիկայի մէջ ու վերոյիշեալ ուկկիանոսը միացնում են Ատլանտեան ուկկիանոսի հետ: Բերլինգի նեղուցը, որ բաժանում է Ասիան Ամերիկայից ու միացնում է Հիւսիսային ուկկիանոսը Մեծ ուկկիանոսի հետ, ամէն տարի ազատվում է սառուցից մի քանի ամիս ժամանակով և այսպիսով ճանապարհ է բացվում դէպի բեւեռային մի քանի ծովերը: Չը նայելով կլիմայի սաստիկ խոնաւութեանը, Հիւսիսային Սառուցեայ ուկկիանոսումը գտնվում են ամենամեծ կենդանիքը, որպիսի են կէտ ձուկ, ծովացուլ, ռնգեղջիւր ու ծովու որթը: Չխորսները ամէն տարի գալիս են այստեղ կէտ ձուկը որսալու համար:

Մեծն ԿԱՄ ԽԱՂԱՂ ՈՎԿԻԱՆՈՍԸ, որ ջրում է արեւելեան կիսագնդի ցամաքների արեւելեան ափերը, նոյնպէս և արեւմտեան կիսագնդի ցամաքների արեւմտեան ափերը, տալածվում է Հիւսիսից հարաւ Հիւսիսային բարեխառն, այլեցեալ և հարաւային բարեխառն գօտիներու միջով ու հասնում է մինչև հարաւային սառուցեայ ուկկիանոսը: Այսքան երկար է տարածվում սա և ունի տեսակ տեսակ բերքեր: Ասիայի ափերքի վերայ սա կազմում է երեք ծով. Օխոտսկի (ОХОТСКОЕ) ծովը — որ բեւեռային ծովերի յատկութիւններն ունի, Գեղին ծովը (ЖЕЛТОЕ), որտեղ տարուայ մեծ մասը նաւադնացութիւն է լինում և Չինաց ծովը (Китайское) Սիամսկի ծոցովը (Сиамерій за), ուր ոչ մի ժամանակ

սառուց չեն գտնի : Ովկիանոսը Ամերիկայի ակերումը երեք տեղ աղեղնաձև մանուկ է և կազմում է երկու ծոց. Կալիֆորնի (Калифорнеский) և Պանամայի (панамский), որոնք գտնվում են այրեցեալ գոտիում և երբեք չեն սառչում : Մեծ ովկիանոսը արևելեան կողմից Ամերիկայի հարաւային վերջաւորութեան մօտ միանում է անտիլապէս Ատլանտեան ովկիանոսի հետ . բացի այս, վերոյիշեալ երկու ովկիանոսը միաւորվում են միմեանց հետ Մագելլանի նեղուցով : Մեծ ովկիանոսը հարաւային կողմումը խառնվում է հարաւային սառուցեայ ովկիանոսի հետ, իսկ արևելեան կողմումը զանազան նեղուցների և բազմաթիւ կղզիների միջով միանում է հնդկական ովկիանոսի հետ : Այս նեղուցներէն մէկը Մալակկի անունով՝ միացնում է Չինաց ծովը Բենգալիայի ծոցի հետ, որ հնդկական ովկիանոսի մի մասն է :

Հնդկական ովկիանոսը երեք կողմիցը պատած է ջրով իսկ չորրորդիցը՝ այն է հարաւից՝ բոլորովին բաց է . նրա ջուրը խառնվում է Ատլանտեան, Խաղաղական և հարաւային Սառուցեայ ովկիանոսների ջրերի հետ :

ՀՆԴԿԱԿԱՆ ՈՎԿԻԱՆՈՍԸ գտնվում է այրեցեալ ու հարաւային գոտիներու մէջ, Կարմիր ծովը, Արաբիայի ծովը, Բենգալիայի ծովը, Պարսից ծովը, Մալակկի նեղուցը և Մոզամբիկի նեղուցը—ամենը հնդկական ովկիանոսի մասեր են. սրանք այրեցեալ գոտիումն են գտնվում և ջրում են այն երկիրները, որոնք երևելի են իրանց հարստութիւնով ու

զանազան բերքերով : Հնդկաստան , Չինաստան և ուրիշ երկրներն էլ հարստութեան մասին ցամաքագնաց վաճառականների զրոյցները պատճառ դառան ոչ մի միայն Ատլանտեան ովկիանոսի , Ամերիկայի ⁽¹⁾ և Հիւսիսային Սառուցեայ ովկիանոսի ⁽²⁾ գտնուելուն , այլև Հնդկական ⁽³⁾ և Մեծ ովկիանոսների ⁽⁴⁾ : Ամբողջ Հնդկական ովկիանոսը , նոյնպէս և մեծը շատ հարուստ են բերքերու կողմից , մանաւանդ ձկներով ու այն տեսակ կենդանիներով , որոնք ունին խեցեմորթ ^(*) , ինչպիսի են կակղամիս ^(**) կենդանիքը և կորալինն :

Հնդկական ովկիանոսը երեւելի է , ոչ թէ իւր բերքերով , բայց աւելի որ ջրում է բոյսերով ու կենդանիներով հարուստ երկիրները :

ԱՏԼԱՆՏԵԱՆ ՈՎԿԻԱՆՈՍՐ Ամերիկա , Եւրոպա և Ափրիկա ցամաքներն է ջրում , որոնց մէջ նա մէկ լայն գետի ձևով է տեղաւորուած և ոչ թէ Մեծ ովկիանոսի պէս քանի զնում է , լայնանում : Ատլանտեան ովկիանոսը հիւսիսից միանում է հիւսիսային սառուցեայ ովկիանոսի հետ , իսկ հարաւից՝ հարաւայինի հետ : Եւ այսպէս սա էլ , ինչպէս Մեծ

(1) Կոլումբ 1492 թուականին :

(2) Գենսլեր սպիտակ ծովի վերայ 1755 թ.

(3) Վասկո—դէ—գամայ , որ սուսֆինը սլտանից բարեկուսոյ զըլուխը . 1498 թ.

(4) Մանւանը 1520 թ.

(*) Раковина.

(**) Моллюски.

ովկիանոսը, գտնվում է այրեցեալ ու երկու բարեխառն
գօտիների մէջ և այս պատճառաւ նրա բերքերն էլ զանա-
զան են զանազան մասերում :

Ատլանտեան ովկիանոսը իւր Հիւսիսային մասումը կազ-
մում է շատ ներքին ծովեր ու ափի ծոցեր Եւրոպայի ու
Հիւսիսային Ամերիկայի ափերում . ընդհակառակն Ափրի-
կայի ու հարաւային Ամերիկայի ափերովք քիչ է ոլորվում,
և կազմում է միայն մէկ նշանաւոր ծոց այն է՝ Գվինէայի
ծոցը :

Ատլանտեան ովկիանոսը Եւրոպացւոց յայտնի է աւելի լաւ .
որովհետեւ շատ հեռու տեղ մտնում է Եւրոպա ցամաքի
մէջ, կազմելով Միջերկրական, Սիւ, Բիսկայայի, Հիւսիսային ու
Բալտիկ ծովերը, որոնք ջրում են զանազան երկիրներ և
կազմում են ճանապարհ համարեա՛ւ ամէն ծովագնաց ճա-
նապարհորդի համար : Այստեղ գտնված փոքրիկ նեղուց-
ները, այն է՝ Զիբրալտարի և Պա—Դէ—Կալէի, կարող էին
ծովագնացութեան արգելք դառնալ քանի որ ծովագնա-
ցութեան մէջ կրթութիւն չէր եղած . բայց յետոյ՝ երբ
փոքր 'ի շատէ վարժվեցան և նաւավարութիւնը յառաջա-
դիմութիւն արեց, այն ժամանակից այս ծովերը լաւ ու
սովորաւոր դարձան ծովագնացների կրթութեան համար :
Այս պատճառաւ զարմանալի չէ, որ Եւրոպացիք այս գոր-
ծի մէջ ուրիշ ազգերից շատ յառաջացան, աւելի երբ նը-
րանք ծանօթացան ծովային վաճառականութեան օգտի հետ :

իրանց օգտի ետև ընկնելու հետ նրանք սկսեցին աւելի յարմար ու անխտանգ ճանապարհներ որոնելու Ատլանտեան ովկիանոսի վերայ և այսպէս նրանք այս ովկիանոսի հետ աւելի ծանօթացան ամէն ծովերից :

Ատլանտեան ովկիանոսը Հիւսիսային Ամերիկայի ամերուսմը կազմում է ծոցեր , որոնք են . Սուրբ Լաւրենտիայ (Св. Лаврентія) Մեկսիկայի ծոց (Мексиканский залив) և Կարայիբեան ծով (Карибское Море) : Վերջին երկուսը նշանաւոր են նրանով , որ դանվելով այրեցեալ գօտիում՝ ջրում են Եւրոպայիցը մօտիկ եղած պտղաբեր երկիրները : Վերջապէս այս էլ պէտք է նկատենք , որ Ատլանտեան ովկիանոսի մէջ գտնուված կղզիները ցամաքիցը շատ մօտ են , իսկ խաղաղականի մէջ գտնուվածները—ցամաքիցը հեռացած և աւելի ովկիանոսի կենդրոնի մօտ . Ատլանտեան ովկիանոսի ամերը աւելի ցածր են և մերձեայի , խաղաղականինը—ընդհակառակ :

ՀԱՐԱԻԱՅԻՆ ՍԱՌՈՒՅՆԱՅ ՈՎԿԻԱՆՈՍԸ որ ջրում է հարաւային բևեռային ցամաքը , աւելի փոքր է յայտնի Եւրոպացւոց քան թէ Հիւսիսային սառուցեայ ովկիանոսը , որովհետև մօտենալը աւելի դժուար է սառուցների պատճառաւ :

Ցամաքները և նրանց գլխաւոր մասերը :

Ցամաքները երկրագնդի վերայ հաւասարապէս չեն դասակարգած : Արևելեան կողմը աւելի մեծ ցամաք է գտնու-

վում, քան թէ արևմտեան կողմը. հիւսիսային կողմը աւելի մեծ, քան թէ հարաւային: Արևելեան կիսագնդի վերայ գտնվում են Հին Աշխարհ և Ավստրալիա. արևմտեան կիսագնդի վերայ—Նոր Աշխարհ և հարաւային ցամաքի մի մասը, որ արևելեան կիսագնդի վերայ է:

Հին ԱՇԽԱՐՀ կոչվում է արևելեան կիսագնդի հիւսիսային կիսամասը, Ափրիկէի արևմտեան կանառչ գլխիցը բռնած անց է կենում Ասիայի արևելեան գլուխը և այն տեղից արևմտեան կիսագունդ: Այս Հին Աշխարհը Հնդկական ու Ատլանտեան ովկիանոսների ծոցերովը (կարմիր, Միջերկրական և Սև ծովերը), որոնք խորը մտած են, բաժանվում է երեք մասը, այն է՝ եւրոպա, Ասիա և Ափրիկա:

Այս մասերիցը ԱՍԻԱՆ շատ մեծ է. նա տարածվում է Արևելահիւսիսային (Сѣверовосточный мысъ) գլխից մինչև Բոմանիա և Կոմորին (Романія и Коморинъ) գլխները և բռնած ունի հիւսիսային սառուցեայ, բարեխառն և այրեցեալ գօտիները. արևմուքից դէպի արևելք ունեցած տարածութիւնը նոյնպէս միւս երկու մասիցը Ասիայինը աւելի մեծ է. այն է Միջերկրածան ծովից սկսած մինչև Բերինգեան նեղուցը: Ամբողջ Ասիան արևմտեան կողմը աւելի ու աւելինեղանում է, իսկ արևելեան կողմը—լայնանում, սրա համեմատ Ասիայի երկու լեռանց շղթայքը մօտենում են միմեանց արևմտեան կողմումը, հեռանում են մէկ մէկից արևելեան կողմումը: Այս երկու շղթաներից հարաւայինը

որ Հիմալայիան (Гималайскій хребетъ) է կոչվում, կազմում է աշխարհի ամենաբարձր լեռները. իսկ Հիւսիսայինը, որ Սիբիրի կամ Ալտայեան (Сибирскія или Алтайскія горы), լեռներ է կոչվում, կազմում է աշխարհի ամենաերկայն տարածվող շղթայ։ Սա Հիւսիսային հարթհաւասարութիւնը (1) (Սիբիր), որի վերայ սահում են Օբ, Ենիսէյ, Լենա, (Обь, Енисей, Лена) գետերը, բաժանում է աշխարհի ամենամեծ բարձրաւանդակութիւնից (2), որ գտնվում է միջին Ասիայում և որի հիւսիսային ափը (դրադը) իջնելով կազմում է Ալտայեան շղթայ։ Կենդրոնական բարձր Ասիայի արևելեան կողմը գտնված շղթաներից սահում են Ամուր, Եանցէկիանգ և Կամբոջա (Амуръ, Яантцекіангъ и Камбоджа) մեծամեծ գետերը։ Այս միջնասիական բարձրաւանդակութեան հարաւային ափը կազմում է վերոյիշեալ Հիմալայեան շղթայ, որից սահում են Գանգէս և Ինդոս (Гангъ и Индъ) գետերը, որոնք Ասիայի գետերի շարքումը փոքր կը յիշվին։ Ասիայի այս երեք զառկայքը (1) ուղղված են դէպի երեք ովկիանոսները, այն է Սառուցեայ (որ ընդունում է Օբ, Ենիսէյ և Լենա գետերի ջրերը) Մեծ ովկիանոսը (որ

(1) Низменность կոչվում է այնպիսի տեղը, որի բարձրութիւնը 1000 ոտնաչափից ցածր է, համեմատելով ծովի մակերևոյթի հետ։

(2) Плоскогорье ասվում է այնպիսի տեղ, որնոր 1000 ոտնաչափից բարձր է ծովի մակերևոյթի հետ համեմատելով։

(1) Покатость, склонъ.

ընդունում է Ամուր, Եանցէզիանդ և Կամբոջայի ջրերը) և Հնդկական (որ ընդունում է Գանգէս և Ինդոս գետերը) : Ամէն մէկ ովկիանոսում գտնվում են կղզիներ, որոնք պատկանում են Ասիա ցամաքին : Նրանցից աւելի մեծերը սրանք են. Մալաւին, Յապոնեան կղզիք, Փիլիպպոսեան կղզիք, Յելերես, Բորնէօ, Եաւա, Սախալին (Сахалинъ, Японскіе острова, Филиппинскіе острова, Целебесъ, Борнео, Ява и Суматра) :

Երկրի միւս երկու մասերը, Եւրոպան և Ափրիկան, կը պաճ են Ասիային աբւմանան կողմից : Ափրիկան, որ երկրի մի առանձին մասն է, միանում է Ասիայի հետ միայն մի նեղ ուէղ Լաւ պարանոցոյ (Суэскій пер). Ասիա իցը բաժանված է Կարմիր ծովով, Բաբելմանդերի նեղուցով և Միջերկրական ծովով (Красное море, Бабельмандебскій проливъ и Средиземное море) : Միջերկրական ծովը բաժանում է Ասիան Եւրոպայից, որնոր ինչպէս Թերակղզի կպած է Ասիային երկու շղթաներով—կովկասեան և Ուրալեան շղթաներով (Кавказскій и Уральскій хр.)—բաժանած է Ուրալ գետով (р. Уралъ) Կասպից և Սև ծովերով (Каспійское и Черное М) :

ԵՒՐՈՊԱՆ, Աւարաւիայից յետոյ, երկրի բոլոր մասերիցը փոքր է : Եւրոպան տարածվում է Նորդկապ հրուանդանից (Мысь Нордкапъ) որ հիւսիսումն է, մինչև միջերկրական ծովը, որ Եւրոպայի հարաւային կողմն է : Այս

տարածութիւնը, երկայնութիւնը, աւելի փոքր է քան թէ լայնութիւնը, այն է Ուրալեան լեռոններից մինչև Ատլանտեան ովկիանոսը: Եւրոպայի ամենամեծ լեռներն են Ալպեան լեռները (Альпы), որոնց ուղղութիւնն է արևմտքից արևելք և թէպէտ համարեա բարեխառն դասու մէջ տեղն են գտնվում, այնու ամենայնիւ ունին շատ ձիւնապատ զաղաթներ: Նրանց վերայ եղած ձիւնը երբեք չի հալվում, ինչպէս էլ բլեռների սառուցները: Եւրոպայի բարձրաւանդակութիւնիցը սահում է Վոլգա գետը (р. Волга), որնոր այս ցամաքի ամենամեծ գետն է (երկայնութիւնը 3000 վերստից աւելի է):

ԱՓՐԻԿԱՆ տարածվում է հիւսիսից հարաւ Զիրբալտարի նեղուցիցը մինչև Բարեյուսոյ հրաւանդանը (Мысль Доброй Надежды), որ հաւասար է նրա լայնութեանը, այսինքն Կանանչ հրաւանդանից (Мысль Зеленый) մինչև Քար դափուսի հրաւանդանը (М. Гвардафуй): Նրա մեծ մասը պրեքեալ դասումն է և որքան էլ տեղ ունի բռնած հասարակածից դէպի հիւսիս, այնքանն էլ դէպի հարաւը: Այնպէս որ հիւսիսային կիսագնդի հիւսիսային արևադարձը գտնվում է միջերկրական ծովի ափերի, Նեղոսի բերանի և Ատլաս (Атлас) լեռանց շղթայի մօտ, իսկ հարաւային կիսագնդի հարաւային արևադարձը մօտենում է Բարեյուսոյ գլխին: Այսպիսի դրութիւն ունենալն է պատճառը որ Ափրիկէն շատ տաք երկիր է, աւելի որ այստեղ ովկիանոսը ոչ մե-

ծամեծ ծովեր է կազմում և ոչ էլ մեծամեծ ծոցեր, բացի Գվինեական ծոցը (Гвинейский залив) Նիգեր գետի հետ (р. Нагерь) : Բացի սա, այստեղ բարձրանում են Կոնգոյի լեռներ կամ Կոնգո շղթան (Конгская горы или Хребетъ Конго), որոնց ուղղութիւնը զուգահեռական (1) է հասարակածի հետ և որոնք արդելում են ծովային քամիներուն մօտեւ միջին Աֆրիկա :

ԱՒՍՏՐԱԼԻԱՆ երկրի բոլոր մասերիցը ամենափոքրն է : Նա ջրվում է Հնդկական և Մեծ ովկիանոսներով . գտնվում է հարաւային—բարեխառն և այրեցեալ գոտու սահմանումը : Այնպէս որ նրա հիւսիսային կէսը թէ որ կղզիներն էլ հետը հաշուենք, այսինքն Նոր Գվինեան (Нов. Гвинея), գտնվում է այրեցեալ գոտումը, իսկ հարաւային կէսը թէ որ կղզիները հետը հաշուենք, այսինքն վանդեմինովա երկիրը (Вандеминова Земля), գտնվում է հարաւային բարեխառն գոտումը : Աւտրալիայի հետ հաշվում են շատ կղզիներ, որոնք ցրուած են Մեծ ովկիանոսումը և գտնվում են ցամաքից զէպի արևելք : Նրանցից զխառուրները սրանք են . Սանդվիչեան (Сандвичевы) Ընկերութեան (Товарищества) Բարեկամութեան (Дружбы) և Նոր Զելանդիա (Нов. Зеландія) :

(1) Զուգահեռական կոչվում են այնպիսի երկու գծերը, որոնք հաւասար հեռաւորութեան վերայ են և որքան նրանց ծայրերը երկարացնելու լինենք, բոլոր կէտերի հաւասար հեռաւորութիւնը մնում է անփոփոխ :

ՀԱՐԱՒԱՐԵՒԵՆՈՒԹՅՈՒՆ ՅԱՄԱՔ, որ գտնվում է հարաւային սառուցեայ գօտումը, համարեալ թէ ամենևին յայտնի չէ. միայն տեղտեղ նրա ակերբքի վերայ եւրոպացիք եղած են: Այս ցամաքի մեծ մասը պատած է սառուցի չափաբնորով, այնպէս որ անկարելի է նաւով մերձենալը: Հազիւ թէ մէկ քանի կէտեր յայտնի է, երկու էլ հրաբուլի տեսած կան, որոնք հիմն են դառնում մտածել, թէ այնտեղ էլ պէտք է կոշտ ցամաք լինի:

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ ԿԱՄ ԱՄԵՐԻԿԱ կազմում է արեւմտեան կիսագնդի մեծ մասը: Նա հիւսիսից դէպի հարաւ տարածվում է Բարբոլ հրուանդանից (Мысь Барровъ) մինչևի Գորն հրուանդանը (Мысь Горнъ) և բացի հարաւային Սառուցեայ գօտին անց է կենում մնացած ամէն գօտիներով: Սա նրման է երկու եռանկիւնաձև թերակղզիների, որոնք միանում են միմեանց հետ մի նեղ Պանամեան պարանոցով (Панамскій перешеекъ): Այս երկու եռանկիւնների գագաթները սրանք են. մէկինը՝ Պրինց վալ լիտեան հրուանդանը (Мысь Принца Валлійскаго) և Պանամեան պարանոցը, իսկ միւսինը Բլանկօ և Գորն հրուանդանները (Мысь Бланко и Горнъ): Այս երկու եռանկիւնների մէջ այնքան զանազանութիւն կայ, որ նրանցից ամէն մէկը կարելի է առանձին աշխարհ համարել: Այս զանազանութիւնը պարզ կ'երևի և հասկանալի է լինում, երբ մենք՝ համեմատելով Ամերիկայի դրութիւնը՝ տեսնում ենք, որ Հիւսիսային Ամերիկան (Северная

Америка) համապատասխանում է Եւրոպային և բռնած ունի մեծ մասամբ բարեխառն դօտի, իսկ Հարաւային Ամերիկան (Южная Америка) համապատասխանում է Ափրիկէին և բռնած ունի այրեցեալ դօտի :

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՆ, ինչպէս էլ Եւրոպան, հիւսիսից պատած է հիւսիսային սառուցեայ ովկիանոսով : Նրանց հարաւային ափերը, ինչպէս և Հարաւային Ամերիկայի և Ափրիկէի հիւսիսային ափերը, ջրովում են ներս մտած ծովերով, որ Ատլանտեան ովկիանոսի մասերն են (Հին աշխարհում գտնված Միջերկրական ծովին համապատասխանում է այստեղ Կարայիբեան ծովը Մեկսիկական ծոցի հետ) : Առ հասարակ Հիւսիսային Ամերիկան շատ նմանութիւններ ունի Եւրոպայի հետ թէ բլեւային շրջանի գեօրայ և թէ ներքին ծովերի և ծոցերի հարստութիւնովը, որ շատ ունի, ինչպէս Հոգլոնեան ծոցը (Гудзоновъ заливъ), Գեվիսեան նեղուցը (Девисовъ проливъ), Սըրբոյն Լաւրենտիոսի ծոցը (Заливъ Св. Лаврентія) : Եթէ Հոգլոնեան ծոցը Բալտիկ ծովին փոխանակենք և Բալթիկեանը — Հիւսիսային ծովին, այն Ժամանակ այս համեմատութիւնով Գրենլանդիան (Гренландія) իւր հարաւային Փարեւալ (Фареваль мысъ) հրուանդանովը կը նմանի Նոր Աշխարհի կղզներուն, իսկ Գէորգայ կղզին՝ իւր (Острова Георгевы) կը փոխանակեն Շալիցբերգենին և Իսլանդիային . յետոյ, Սուրբ Լաւրենտիայի ծոցը Նիւֆաունդլենդ կղզին (островъ Нью-


ՓԱՅՈՒՆԴԼԵՆԴԵՅ) կը փոխանակեն Պա-դը-Կալէին և Մեծ-Բրիտանիայի կղզիներու : Այս համեմատութիւնով հեշտ կարող ենք հասկանալ, որ Հիւսիսային Ամերիկան Եւրոպայիցը քիչ ծոցեր ունի, թէև նրա հետ հաշուելու լինենք Արեւմտեան-Հնդկաստանի կղզիները (Острова Востъ-Индіи), որոնք այն ժամանակ պէտք է համապատասխանեն, այսինքն փոխանակեն, Եւրոպայի հարաւային երեք թերակղզիներու և միջերկրական ծովի . կղզիներու : Մեծութեան կողմանէ, Հիւսիսային Ամերիկան այնպէս չէ յարաբերում հարաւային Ամերիկային, ինչպէս Եւրոպան Ափրիկէին, այլ ընդհակառակ : Ընդ նմին՝ Հիւսիսային Ամերիկայի երկայնութիւնը, այսինքն հիւսիսից հարաւ տարածութիւնը, հարաւային Ամերիկայի երկայնութիւնից մեծ է, երբ Եւրոպայի երկայնութիւնը Ափրիկէի երկայնութիւնից փոքր է : Ինչպէս որ Հիւսիսային Ամերիկան նմանում է Եւրոպային իր ձևով ու դրութիւնով, այնպէս էլ հարաւային Ամերիկան նմանում է Ափրիկէին իր եռանկեան ձևով, Ատլանտեան ուղիկանոսի զուգահեռական ավերով և աղեղնաձև ծոցերով, որոնք երկու արեւմտեան ավերի մօտ են դանվում :

Բայց եթէ Ամերիկայի ներքին դրութիւնը համեմատելու լինենք, նա ոչ Եւրոպային է նման և ոչ Ափրիկէի : Հին աշխարհումը գլխաւոր շղթաների ուղղութիւնն է արեւմտից արեւելք . Ամերիկայումը, ընդ հակառակ, հիւսիսից հարաւ : Սկսած Հրոյ երկրիցը (Огненная земля) կամ

աւելի ճիշտ ասելք Մագելլանեան նեղուցից (Магелланова про-
ливъ) Ամերիկայի արեւմտեան ափերով անց է կենում լեառ-
ների շղթայ Անդ կամ Կորդիլէրի (Анды или Кордильеры)
անունով, որոնք Հիւսիսային Ամերիկայում կոչվում են Ժայռի
շղթայ (Скалистыя)։ Այս լեռները արեւմտքումը շատ զա-
ռիվայր (1) են, այնպէս որ ծովը այստեղ շատ խորն է, ա-
փերը բարձր են և Թերակղզիներ ու ծոցեր չեն կազմվում,
բացի Հիւսիսային Ամերիկայի Թերակղզին, որ կոչվում է
Կալիֆորնիա (Калифорнія) Սուրբ Ղուկասու հրուանդանով
(Мысъ Св. Луки) և Ալեասկա Թերակղզին (полуостровъ Аляс-
ка), որի շարունակութիւն են Ալէուտեան կղզիները (Алеу-
тскіе острова), որոնք բաժանում են Կամչատկա ծովը խա-
ղաղ ովկիանոսից։ Բարձրութեանց այսպիսի դրութիւ-
նիցը կախուած է ջրերի ուղղութիւնը, այն է որ վազող
ջրերը Թափվում են Ատլանտեան և լոչ Թէ խա-
ղաղ ովկիանոսը։ Այսպէս, Հիւսիսային Ամերիկայի գե-
տերը. Սերժէն Լաւրենտիոյ (Св. Лаврентія) Միսիսիպի (р.
Миссисипи)Րիօ—Գրանդէ (р. Рио—Гранде) և Հարաւային Ա-
մերիկայի գետերը. Օրինօկո (р. Ориноко) Ամազոնի (р. А-
мазонская), Պարանա (р. Парана)—Թափվում են Ատլան-
տեան ովկիանոսում։ Հիւսիսային Սառուցեայ ովկիանոսումը
Թափվում է միայն Մեկենզի (р. Мекенза) գետը, իսկ Մեծ ով-
կիանոսումը—Կօլօրադօ (Колорадо) գետը։ Այսքան մեծա-

մեծ և երկու ամենամեծ դետերի հոմունքը, զէպի Ատանտեան ուկկիանոս ցոյց է տալի, որ այստեղ մեծամեծ հարթհաւասարութիւններ կան, որոնց վերայ շատ կը յաջողի հողագործութիւնը և վաճառականութիւնը, աւելի որ այստեղից աւելի հեշտ է հաղորդակցութիւն ունենալ Եւրոպայի հետ, քան թէ Կորդիլիերեան արեւմտեան զառիւկայնեցը, որոնք Մեծ ուկկիանոսին են նայում: Մեծ ուկկիանոսը իրա ցրուած կղզիների խմբերով բաժանում է Ամերիկան զարգացած և վաճառականութեամբ ծաղկած երկրներէցը:

Քննելով երկրի ցամաքների դրութիւնը գօտինների կարգով, տեսնում ենք, որ երկրի ամենափոքր մասը գտնվում է սառուցեայ գօտքումը, իսկ ամենամեծն՝ բարեխառն գօտքումը:



ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՑԱՄԱՔՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԳԼԽԱԻՈՐ ՄԱՍԵՐԸ

I. Հին աշխարհ

Նրա մասերը .

1) ԵՒՐՈՊԱ :

Կղզիներ Նոր Հող .

Շալիցրերդէն

Իսլանդիա .

Բրիտանիան :

Հրուանդան Նորդկապ :

Լեառներ Աւստրալիա .

Ուրալեան շղթայ .

Կովկասեան շղթայ :

Գետեր Վոլգա .

Ռուրալ :

2) ԱՍԻԱ :

Կղզիներ Սախալին .

Յապոնեան .

Փիլիպպոսեան .

Յէլենեա .

Բորնէօ .

Եակա .

Սումատրա :

Հրուանդաններ . . . Արևելահայկա՞յին .

Արևմտեան .

Րօմանիա .

Կօմօրին ;

Լեռներ Սիրիլեան .

Հիմալայեան :

Գետեր Օր .

Ենիսէյ .

Լենա .

Ամուր .

Եանցեկիանդ .

Կամբոջա .

Գանգէս .

Ինդոս :

3) Ա.Փ.Ր.Ի.ԿԱ .

Պարանոց Սուէզեան .

Կղզի Մադագասկար

Հրուանդաններ . . . Կանանչ .

Բարեյուսոյ ;

Գաւարդաֆոսյ :

Լեռներ Արլառ .

Կօնգո ;

ԳեՏԵՐ Նեղոս .

Նիղեր :

II. Նոր աշխարհ

ԱՄԵՐԻԿԱ .

Կղզիներ Հիսպիոյին Գէորգայ .

	Գրեն, անդիա.
	Նիսի ֆաունդիէնդ.
	Արեւմտեան Հնդկաստան.
	Հրոյ երկիր.
	Ալէստեան:
Հրուանդաններ	Ֆարեվէլ.
	Գատերաս.
	Գոյն.
	Բլանկօ.
	Սուրբ Ղուկասու ;
Բեառներ	Անդի կամ Կորդիլերեան,
	Ժայռի ;
Գետեր	Մեկէնդի .
	Սուրբ Լարենտիոյ.
	Միսիսիպ.
	Րիօ—Գրանդէ .
	Օրինօկօ
	Ամազօն.
	Պարանա .
	Կօլօրադօ ;

III. Աւստրալիական ցամաք :

Կղզիներ	Նոր Հոլանդիա.
	Վան—Դիմենտի երկիր.
	Նոր Գվինէա .
	Սանդվիչեզ .
	Ընկերութեան .
	Բարեկամութեան .
	Նոր Զելանդիա ;

IV Հարաւարեւոյսի ցամաք :

Քաղոչածք :

Ի՞նչ է այն մոլորակի անունը , որի վերայ մենք կենում ենք :

Ինչից է բաղկացած նրա մակերևոյթը :

Երկրի մակերևոյթի վերայ ջուրը շատ է , թէ հոյր :

Քանի՞ կիսագունդ են և որո՞նք ենք ,

Քանի՞ զլխաւոր կողմեր կան :

Ի՞նչպէս է կոչւում այն ուղղութիւնը , որ հիւսիսի և արեւմտեան մէջ տեղն է :

Ի՞նչ է քարտեզ :

Քարտեզի վերայ հիւսիսը որտեղ է :

Ի՞նչպէս խմանանք թէ երկնքի ո՞ր կողմումն է լինում կէսօր : Հիւսիսի հակառակ կողմը որն է :

Արեւմտի հակառակ կողմը ո՞րն է :

Ցամաքի բնաբանական մասերը որո՞նք են :

Ի՞նչ է ցամաք և որո՞նք են :

Ի՞նչ ցամաքներ կան արեւելեան կիսագնդումը :

Աւտրալեան կիսագնդի ո՞ր մասումն է :

Ո՞ր կիսագնդումն է Ամերիկան :

Ի՞նչ զանաշանութիւն կայ ցամաքի և կղզու մէջ :

Ի՞նչ երկիրներ կան արեւմտեան կիսագնդումը : Ի՞նչ է կղզի :

Ի՞նչ մեծ կղզի կայ արևմտեան կիսագնդումը : Ո՞րտեղ է Մադագասկար կղզին :

Երկրի ո՞ր մասերիցն է կազմվում արևելեան կիսագնդը :

Ի՞նչ է Թերակղզի :

Ի՞նչ Թերա՛ղզի կայ Ասիայից արևմտահարաւ :

Ինչո՞վ է զանազանվում կղզին Թերակղզուցը :

Ի՞նչ է հրուանդան : Ո՞րտեղ է Կոմորին հրուանդանը :

Ի՞նչ հրուանդան կայ Ափրիկայի արևելեան կողմում և ի՞նչ ջրեր ջրում են նրան :

Ի՞նչ է պարանոց : Ո՞րտեղ է Պանամի պարանոցը :

Ո՞ր պարանոցն է միաւորում Ափրիկան Ասիայի հետ :

Ի՞նչ է լեռոն : Ի՞նչ է բարձրաւանդակութիւն կամ հարթ—հաւասարութիւն :

Շատ լեռների միաւորութիւնը ի՞նչպէս է կոչվում :

Ի՞նչ է դաշտ :

Ի՞նչ լեռոններ են գտնվում արևելեան կիսագնդումը : Արևմտեան կիսագնդումը :

Ջրի բնական բաժանմունքները որո՞նք են : Քանի՞ ովկիանոս կայ : Ո՞ր ովկիանոսն է ամենից մեծը :

Ի՞նչ է գետ :

Քետի զանազան մասերը ի՞նչ անուններ ունին :

Ի՞նչպէս է կոչվում այն գետը, որ Թափվում է կրկին միւս գետը :

Քետերի սկզբնաւորութիւնը ի՞նչպէս է կազմվում :

Ի՞նչ է ներուց :

Անուանեցէ՛ք Եւրոպայի ամերու մօտ եղած ներուցները :

Ի՞նչ է ամիր :

Ասիայի և Ափրիկայի մէջ տեղը ի՞նչ ծով կայ : Եւրոպայի և Ափրիկայի մէջ տեղը :

Ի՞նչ է ծով : Հարաւային Ամերիկայի Հիւսիսային մասումը ի՞նչ ծով է գտնւում : Ի՞նչ է ծոց : Ի՞նչ ծոց կայ Հիւսիսային Ամերիկայի հարաւային կողմումը . արեւելեան կողմումը :

Ի՞նչ ծոց կայ Եւրոպայի արեւմտեան ափումը :

Արեւմտեան կիսագնդի ցամաքի ամերուումը ի՞նչ ծոցեր են :

Ի՞նչ ծովեր կան Եւրոպայի ամերուում :

Ի՞նչ ծոցեր կան արեւելեան կիսագնդումը :

Գվինէայի ծոցը ո՞ր գետն է թափւում :

Ասսպից ծովումը երկու գետ են թափւում , անուանե՞րը :

Չինացւոց ծովը ո՞ր գետն է թափւում :

Ի՞նչ ծովեր կան Ասիայի ամերուումը :

Ո՞րտեղ պէտք է պտռենք Բիսկայեան ծոցը : Գվինէայինը :

Ի՞նչ ճանապարհով պէտք է գնայ նաւը , եթէ ուզում է Բալտիկ ծովից Օխոտսկի ծովը հասնի :

Իսկ Բալտիկ ծովից Սև ծովը :

Արեւմտեան Հնդկաստունից Բալտիկ ծովը ի՞նչ ճանապարհով կարող ենք հառնիլ :

Ալաիֆօրնեան ծոցից Հիւսիսային ծովը :

Կարմիր ծովից ՍԼ ծովը :

Ի՞նչ է պարանոց : Ո՞րտեղ է Սուէզի պարանոցը :

Ո՞ր երկիրներն են կոչվում Հին Աշխարհ : Ինչո՞վ է բաժանած Նոր Աշխարհը Հին Աշխարհից :

Կապից ծովից ո՞ր ծովերը կարող ենք անցնել :

Ի՞նչ է Կապից ծովը :

Մեկսիկայի ծոցից Բերինգեան նեղուցը ի՞նչպէս հասնենք :

Ի՞նչ գծեր են նշանակում քարտեզի վերայ . Ի նչ է հասարակած : Միջորէական : Զուգահեռական գծեր : Արեւադարձի գծեր : Բևեռային շրջաններ : Բևեռներ :

Այս գծերը իսկիսի երկրի վերայ են : Ինչո՞ւ են այդպիսի գծեր քաշում գլոբուսի կամ քարտեզի վերայ :

Ի՞նչ է միջորէականը : Ի՞նչ գծերով այրեցեալ գօտին բաժանվում է Հիւսիսային և հարսւային բարեխառն գօտիներից : Ի՞նչ երևոյթներով զանազանվում են տաք երկիրները բարեխառն երկիրներից : Բարեխառններ՝ Սառուցեայ գօտու երկրներից : Անուանել այրեցեալ գօտու երկիրները : Հիւսիսային Սառուցեայ գօտու երկիրները : Ո՞ր աստիճանների մէջ է բովանդակվում այրեցեալ գօտին : Բարեխառն գօտիները : Սառուցեայ գօտիները : Ի՞նչ է աստիճանը : Մէկ աստիճանը քանի վերստ ունի : Էկուատոր գծի երկայնութիւնը ո՞րքան է : Միջորէականի՞նը : Էկուատոր վիճը մե՞ծ է թէ շրջապոյտ գիծը :

Ո՞րտեղ է անցկացրած այն միջորէականը , որ բաժանում է արեւմտեան կիսագունդը արեւելեան կիսագնդից :

ԵՒՐՈՊԱ

Եւրոպա ցամաքի տէրութիւնները ,

նրա թերակղզիները և կղզիները :

Եւրոպան բաժանւում է զանազան մասեր , որոնք առանձին առանձին անուաներ ունին : Այս մասերը կազմում են առանձին տէրութիւններ , որոնց բնակիչները զանազանւում են մէկմէկից թէ լեզուով , թէ կրօնով , թէ սովորութիւններով և թէ կառավարութւնով : Երբոր աշխարհագրութեան մէջ խ սում են բնական բաժանմունքի (1) վերայ , ուղում են ասել թէ ինչպէսի մասեր է շինել բնութիւնը այս կամ այն երկրի մէջ—այն է . գետեր , լճեր , կղզիներ , լեռներ և այլն : Իսկ երբ խօսում են քաղաքական բաժանմունքի (2) վերայ , ուղում են ասել թէ ի՞նչ է շինել մարդս—այն է . տէրութիւններ , գաւառներ , քաղաքներ , գիւղեր , ճանապարհներ , ջրանցքներ և այլն :

(1) Естественное дѣленіе.

(2) Политическое дѣленіе.

Եւրոպան հին աշխարհի ամենափոքր ցամաքն է և մի և նոյն ժամանակ երկրիս ամենանշանաւոր մասն է , որովհետեւ նրա բնակիչները ամենից լուսաւորեալ են և ամենից ճարտարադէտ : Եւրոպացիքը ուրիշ մասերի բնակիչներին էլ օգուտ են տալի , սովորցնելով նրանց խաղաղ և հանդարտ կեանք վարելը :

Եւրոպայի մէջ գտնված տէրութիւնները սրանք են .

ՌՌԻՍԱՍՏԱՆ	նրա գլխաւոր քաղաքն է Ս . Պետերբուրգ .
ՏԱՃԿՍՍՏԱՆ (Դուրքիա)	Կոստանդնուպօլիս
ՅՈՒՆԱՍՏԱՆ (Դրեքիա)	Աթէնք
ԱՎՍՏՐԻԱ (Աւստրիա)	Վիեննա
ԻՏԱԼԻԱ (Իտալիա)	Տուրին և Հռոմ
ԳԱՂՂԻԱ (Ֆրանքիա)	Փարիզ
ՍՊԱՆԻԱ (Իսպանիա)	Մադրիդ
ՊՕՐՏՈՒԳԱԼԻԱ (Պորտուգալիա)	Լիսբոն
ԲԵԼԳԻԱ (Բելքիա)	Բրիսսէլ
ՀՈԼԼԱՆԴԻԱ (Դոլլանդիա)	Հազա
ԳԵՐՄԱՆԻԱ (Դերմանիա)	Ֆրանկֆուրտ Մայնի վրա
ԴԱՆԵՄԱՐԳԱ (Դանիա)	Կոպէնհագէն
ՊՐՈՒՍԻԱ (Պրուսիա)	Բերլին
ՇՎԷԻՅԱՐԻԱ (Շվեյցարիա)	Բերն
ԱՆԳԼԻԱ (Անգլիա)	Լոնդոն

Եւրոպայի տէրութիւնները կարող ենք չորս խումբ բաժանել .

a) ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒՐՈՊԱ, որի մէջ գտնվում են . Անգլիա , Շվեդիա Նորվեգիայի հետ և Դանեմարգա Իսլանդիայի կղզու հետ :

b) ՄԻՋԻՆ ԵՒՐՈՊԱ, որի մէջ գտնվում են Գաղղիա Կորսիկա կղզու հետ , Բելճիա , Հոլլանդիա , Գերմանիա , Պրուսիա , Ավստրիա և Շվեյցարիա :

c) ՀԱՐԱԻԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՆ բաղկացնում են . Պորտուգալիա . Սպանիա՝ Բալէարեան կղզիներու հետ , Իտալիա՝ Սարդինիայի և Սիցիլիայի հետ , Տաճկաստան՝ Կանդիա կղզու հետ , Յունաստան՝ մերձաւոր Իօնիական կղզիների հետ :

d) ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱՆ կազմում է միայն Ռուսաստանի տէրութիւնը :

Հարաւային և Հիւսիսային տէրութիւնները կղզիներու և թերակղզիներու վրա են , որոնք կամ տէրութեան անուններ են կրում և կամ նրանց վերայ գտնված լեռանց շղթայի : Այսպէս , Դէպի հարաւ , Տաճկաստան և Յունաստանը գտնվում են Բալկանիան թերակղզու վերայ (Բալկանիան լեռուններից) , Իտալիան—Ապենինիան թերակղզու վրա , Սպանիան՝ Պորտուգալիայի հետ—Պիրենիան թերակղզու վրա : Դէպի Հիւսիս Շվեդիան Նորվեգիայի հետ—Սկանդինավիան թերակղզու վրայ (Սկանդինավիան լեռուններից) , Դանեմարգիան—Դանեմարգայի կամ Իսլանդիան թերակղզու վրա (Իսլանդիան լեռուններից) :

Արտաքին ջրերը :

Եւրոպան արեւելք և արեւելահարաւային կողմից կապած է Ասիային , որից նա բաժանւում է Ռուսիան (Уралъскіе) լեռներով , Ուրալ գետով և Կովկասեան լեռներով : Եւրոպայի մնացած նրա մասերը շրջապատած են ծովերով և ովկիանոսներով , այն է՝ հարաւից՝ Սեաւ և Միջերկրական ծովերով , արեւմուտքից Ատլանտեան և հիւսիսից՝ Սառուցեայ ովկիանոսներով : Վկիանոսի այս բոլոր մասերը ափերի մօտ կաղնում են ծոցեր և ծովեր , որոնց յափու թիւնները վանազան են :

ՀԻՒՍԻՍՍՅՈՒՆ ՍԱՌՈՒՅՆՍՅՈՒՆ ովկիանոսը Եւրոպայի ափերի մօտ կաղնում է Սպիտակ ծով (Бѣлое море) երեք մեծ ծոցերով : Ողջ Սառուցեայ ովկիանոսը բովանդակւում է սառուր գոտում . տարուայ մեծ մասը ծածկւած է . ինչպիսիսանք ենք , ամբողջ ասուացներով , որոնք ահապին ապրիլէն լող են տալիս և այստեղ նաւագնացութիւնը չափազանց վտանգաւոր է : Միայն կէտ ձուկ , ոնգեղջիւր , ծովացուլ որսողները գալիս են Շվեդիայից , Հոլանդիայից , Գաղղիայից , Անգղիայից , Դանսեմարգայից և կանգ են առնում Իսլանդիայի , Շվեդբերգենի , Նոր Հողի (Новая земля) ափերի վերայ , Վերջի երկու կղզիները սառւր տեղ գողով , ձմեռը անբնակ տեղեր են . և միայն ամառ ժամանակ կենդանանում են եկող որսորդներով և անչափ թռչուններով , որ ամառով գալիս են այստեղ բուներ են հուսում և ճուտեր են հանում :

Միայն Հիւս . Սառ . ովկիանոսի հարաւային մասն է , որ բարեխառն դօտիի մէջ է : Ամառն այստեղ սառուց այն քան չըկայ և այս պատճառաւ Ռուսաստանի և Նորվեգիայի ամենայն բնակիչները ամէն տարի դուրս են գալի ձկնորսութեանի ձողաձկան (треска), վահանաձկան (палтус) փայլեկան (сельдь) ակուլի եակից : Առաջին երեք տեսակը դործ են ածում կերակրի տեղ , իսկ վերջինը տալիս է իւղ , որ դործածվում է լուսաւորութեան համար և մանաւանդ կաշեղէնի դործարաններում :

ԱՏԼԱՆՏԵԱՆ ՈՎԿԻԱՆՈՍԸ Եւրոպայի ամերումը կազմում է հետեւեալ մասեր . հիւսիսային ամերում—Իրլանդացւոց , հիւսիսային կամ Գերմանացւոց և Բալտիկեան ծովերը . արեւմտեանում—Անգղիացւոց ջրանցքը (կամ Մանշ) կալէի նեղուցի հետ և Բիսկայեան ծոցը : Հարաւային ամերում Զիրբալտար նեղուցը անցնելից յետոյ Ատլ . ովկ . կազմում է Միջերկրական , Ադուկեան , Սեաւ և Մարմարայ ծովերը հետեւեալ մասերով , այն է Արխաղիւզոս , Ազրիատիկական ծովը , Հնուէգեան և Լիօնեան ծոցերը :

Ատլանտեան ովկիանոսի հիւսիսային մասը , որ ջրում է բարեխառն Եւրոպայի բոլոր ամերը և բարեխառն Ամերիկայի հիւսիսային ամերը , մեզ յայտնի է ամենից աւելի , որովհետեւ լուսաւորեալ ժողովուրդների նաւերը այս տեղերքը աւելի շատ են այցելութիւն անում , քննութիւնները ցոյց տուին , որ այստեղ մի ծովային ընթացք

կայ, որ Ամերիկայի տաք դօտիի մէջ գտնված ավերից բերում է տաք ջրեր դէպի Եւրոպայի ամերը, և տաքցնում է Եւրոպայի արեւմտեան երկիրները: Ահա այս է պատճառը որ Նորվեգիայում աւելի տաք է, քան թէ Արխանգելսկ և Պետերբուրգ քաղաքներում, միւսնոյն աստիճանի տաք. Փարէզում աւելի տաք է, քան թէ Հաշտարխանում, որովհետեւ Փարէզը այն ծովային ընթացքից աւելի մ.տիկ է, թէպէտ ինչ աստիճանի տակ սա է, նոյն աստիճանի տակ Հաշտարխանն է:

ԻՐԱՆԴԱՅԻՈՅ, ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒ ԲԱՆՏԻԿԵԱՆ ծովերը ունին աւելի մեծ տարածութիւն հիւսիսից հարաւ: Սրանցից Բալտիկեան ծովը կազմում է Ֆինի և Ռիգայի մեծ ծոցերը, իսկ հիւսիսային ծովի արեւելեան մասը կազմում է Սկագերրակ ծոցը: Այս երեք ծովերը հարաւային կողմից բաց են ու կազմում են Զուռդ, Կալէ և Սուրբ Գեորգայ ջրանցք անունով նեղուցներ ու նրանցից միայն Բալտիկեան ծովն է, որ հիւսիսային կողմից փակուած է և կազմում է Բոսնիկեան ծոց:

Այս երեք ծովերը զանազան յատկութիւններ ունին: Իրլանդացւոց ծովը շատ ձկներ ունի և համարեա թէ երբէք չի սառում. նրա ամերի ու կղզիներու վերայ շատ թռչուններ կան: Հիւսիսային ծովը վահանաձուկ (камбала) և փայլունկ (сельдь) ձկներով հարուստ է գարնան ժամանակ և նրա հիւսիսային ամերը սառում են կարճ ժամանակաւ: Բոսնիկեան ծովը երբեմն ողջ տարածութեան

վերայ ծածկվում է սառուցով ու նրա հարստութիւնը պատիկ ձկների մէջ է, ինչպիսի են հրձուկները (салакушка), կիլկայ ձկները և առ հասարակ այն ձկները, որոնք ձուղպածելու համար գետերն են մտնում, ինչպէս օրազուլը (лосось) և այլն.

ԱՆԳՂԻԱՅԻՈՅ ԶՐԱՆՑԻԸ և ԲԻՍԿԱՅԵԱՆ ԾՈՅԸ կամ ինչպէս ասում են Գասկոնեան ծով: Այս երկուսը իրանց արևելեան մասերով մտնում են Եւրոպայի ակերը, արևմտեան կողմից բաց են դէպի ովկիանոսը և ովկիանոսի ջուր ունին. այս պատճառաւ նրանցով ջրված ակերի թէ կենդանիները թէ բոյսերը առանձին են քան թէ լճերի ու գետերի մօտ եղածները.

Անգղիացւոց ջրանցքը և առաւել ևս Կալէի նեղուցը հարուստ են ջրային բոյսերով և ծովային խեցեմորթով (раковины) օրինակ ոստրէով (устрица). իսկ բիսկայեան ծովը առաւել ծովի հոսանքի ժամանակ դուրս է հանում Գաղղիայի և Իսպանիայի ակերի վերայ անչափ ջրային բոյսեր, որից ստանում են կալաքար (поташь): Այս տեղի ջրերը հարուստ են մի առանձին տեսակ փայլունկով, որ ռուսները սարդէլ են անուանում և որից շինում են սարդինկա: Սա այնքան շատ է այնտեղ որ մէկ դամբ (ուռկան) գցելով մինչև քառասուն տակառ (дошка) ձուկ են հանում: Բացի սրանից այստեղ գտնվում է ներկես ձուկը (скасть) սպիտակ քնքոյշ մեով և էլէկտրիկական ներկեսը:

Վերջինս այսպէս կոչվում է, որովհետեւ նրան ձեռք տալիս մենք ստանում ենք էլէկտրիկական հարուած (электрический удар), ինչպէս մէկ էլէկտրիկական մեքենայից :

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ : Սա այսպէս կոչվում է այն պատճառաւ, որ իւր դրութիւնով երեք ցամաքի մէջ տեղն է գտնվում և որովհետեւ համարեա եօթը հազար տարի կարծում էին թէ բացի սրանցից ուրիշ երկիրներ չուկան, այս պատճառաւ հնուց տուած միջերկրական անունը պահպնեցաւ մինչև հիմայ : Սրա երկայնութիւնը արեւմուտքից դէպ ի արևելք է և միայն Եւրոպայի ափերի մօտ կալմում է քանի մի ծոցեր, որոնցից մի քանիսը իսկ ծոցեր են կոչվում, միւսները՝ աւելի առանձնացած գոլով ծովի անուն են ստացել : Ծոցերից՝ Լիճնեանը, Գեոնէզիանը, մինչև անգամ Արշլայիւրադսը աւելի ովկիանոսի ջրերի յատկութիւն ունեն քան թէ Ազախու և Սև ծովի ջրերը, որովհետեւ նրանք աւելի մօտիկ յարակցութիւն ունեն ովկիանոսի հետ ուրեմն և նրանց ջրերը աւելի հեշտ խառնվելով ովկիանոսի ջրերի հետ, աւելի աղի պէտք է լինեն : Միջերկրական ծովը իւր բոլոր մասերի հետ համարեա երբեք չի սառում, բացի Ազոխու և Սև ծովերը, Ղրիմի ափերում և աւելի հիւսիսային մասերը, ուր որ թափվում են հետևեալ մեծ գետերը, Դոնայ, Դնեստր, Դնեպրը, Դոն : Սև ու Ազախու ծովերի մէջ, որ այնքան աղի չեն, գտնվում են թառափ (осетр) և կարմիր ձուկ (крас-

пЯ рѣѡа) անուհով ձկները, որոնք ձուղպ ածելու համար
գետն են մանում:

ՄԱՐԾԱՐԱՅ ԾՈՎԸ, որ միանում է ՍԼ ծովի հետ Կոս-
տանդնուպոլսու նեղուցով, այսպէս կոչվել է այն պատճա-
ռաւ, որ հին ժամանակներից սկսած մինչև հիմա այս տե-
ղն կղզիներում մարմար քար են կտրում: Այս ծովը մի
պատիկ նեղուցով միանում է Արշապեղագոսի հետ, որնոր շատ
հարուստ է սպունգով (губка), աւելի Յունաստանի ափերը
և Իօնիկեան ծովը մինչևի Օտրանտ նեղուցը, 'ի վերջոյ, Ադ-
րիատիկական ծովումը շատ ուտրէներ են գտնվում, որով
կերակրվում են ափնեայ բնակիչները:

Այսպէս, Եւրոպայի շրջապատող ծովերը ոչ միայն մի-
ջոց են նաւագնացութեան, այլ և շատ արդիւնքներ են
տալի ծովամենեայ բնակիչներուն:

Եւրոպայի ներքին ջրերը ու լեւառները:

Եւրոպան որքան հարուստ է արտաքին ջրերով այսինքն
ովկիանոսներով և ծովերով, այնքան էլ հարուստ է ներ-
քին ջրերով այսինքն գետերով և լճերով: Որովհետև գետը
վաղում է բարձր տեղերից դէպի ցածր, ուրեմն գետերի դը-
րութիւնն ու ընթացքը դիտենալով կարող ենք պատկերաց-
նել տեղի դրութիւնը:

Մենք տեսնում ենք Եւրոպա ցամաքի վերայ, բացի թերակղզիները, որ նրա ամենամեծ գետերի սկիզբը երկու ընդհանուր տեղից է: Այն երկու տեղից մէկն է Ալաունի բարձրաւանդակութիւնը (Алаунские возвышенности) արեւելեան Եւրոպայում, միւսը Ալպեան լեռանց շղթայն (Альпийский хребет) արեւմտեան Եւրոպայում:

ԱԼԱՍՈՒՆԻ ԲՍՐՋՐԱՒԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ այնտեղ է, որ տեղից սկսվում են. Արեւմտեան Դվինեան, որ թափվում է Բալտիկ ծով. Վօլգա—Կասպից ծովը և Դնեպր—Սև ծովը: Այս Ալաունի բարձրաւանդակութիւնը, որի բարձրութիւնը 1200' չի անցնում, կամաց կամաց ցածանում է և դաշտ է անցնում և որովհետև ոչ մէկ տեղ փլատակներ (1) չէ կազմում, ուրեմն և ջրվէժներ այս տեղ չը կայ և այս տեղի լայն գետերը յարմար են նաւագնացութեան: Այս Ալաունի բարձրաւանդակութիւնը երեք ճիւղեր է բաժանվում: Առաջինը անցնում է դէպի արեւելահիւսիս. նրա վերայ գտնվում են երկրիս ամենամեծ լճերը. Լադոգա, Օնեգա և Ֆիլենզիայի. յետոյ բաժանելով Հիւսիսային Դվինեան, որ Սալտակ ծովն է մտնում և Պեչորա, որ Հիւսիս. Սառ. ովկիանոսն է մտնում,—բաժանելով այս երկու գետը Վօլգա գետի վտակներից անցնում է Ուրալեան շղթայ: Այս մէկ ճիւղը, որի ճանապարհը այս բոլորիս գծագրեցինք, կոչվում է Ալաունա—Ուրալեան ճիւղ: Երկրորդ ճիւղը Դնեպր

(1) Обрывъ.

բա եւ Վօլգայի , Օկա եւ Դոնի սկզբնաւորութեանց մէջ տեղն է եւ շարունակվում է մինչեւ Սամարեան թէքութիւնը եւ յետոյ Վօլգայի աջ ափովը անցնում է դէպի Կովկասութեանները . — այս երկրորդ ճիւղը կոչվում է Սլաոնա—կովկասեան ճիւղ , Վերջապէս երրորդ ճիւղը է Ալաոնա—կարպատեան , որնոր Արեւմտեան Դալինա, Նեմանը եւ Վիսլան բաժանում է Գննալրից եւ Գննատրից : Առաջին երեքը թափվում են Բալտիկեան ծովը , վերջի երկուսը թափվում են Սև ծովը : Այսպէս երրորդ ճիւղը հասնում է մինչեւ Կարպատեան լեռները : Ուրեմն բոլոր Եւրոպական Ռուսաստանը պատկերացնում է մի ահագին դաշտ , մէջ տեղը ուռած , որից վաղում են գետերը ամէն կողմ : Համարեա թէ բոլոր այս գետերը նաւագնացութեան յարմար են :

Երկրորդ բաժրաւանդակութիւնն է ԱԼՊԵԱՆ ՇՂԹԱՅՆ՝ Ալպեան լեռները Եւրոպայի լեռներից ամէնից բարձր են (14,000') (*) : Նրանցից շատերը այնքան բարձր են , որ ծածկած են մշտական ձիւնով , թէպէտ տաք դօտիի մէջ են : Այս ձիւնը ամառն սկսում է հալվել եւ կազմում է ահագին գետեր , ինչպէս՝ Բեյն՝ որ թափվում է Հիւսիսային ծովը , Բոնա՝ միջերկրական ծովը , Պօ՝ — Ադրիատիկական ծովը : Այս հալվող ձնների ջուրը երբեմն ճանապարհ է բաց անում ահագին սառուցի կտորների հիմքումը . այս

(*) Շեշաը նշանակում է ոռնաչափ (Футъ), 1 վերստը ունի 500 սաժէն , 1 սաժէնը ունի 7 ոռնաչափ :

կտորները, կամաց կամաց հալվելով սլոււմ են սարի ծէրից թերուած մակերևոյթով և հասնելով ներքե փլվում են ու երբեմն մօտերքը եղած գիւղերը կամ ճանապարհները ծածկում: Պէտք է միայն ասել որ այսպիսի կտորները սկըսում են սլալ գագաթների մէջ տեղ գտնված դաշտից կամ արանքից և ոչ թէ խի գագաթից, ու այս կտորները կոչվում են Գլխուհի:

Ալպեան շղթայից դէպի արևելք անցնում է ԿՍՐՊԱՍՏԻ ՇՂԹԱՅՆ, սա աւելի ցածր է, ձիւնապատ գագաթներ չունի և սրանից սկզբնաւորած գետերը աւելի փոքր են:

Ալպեան շղթայից դէպի արևմուտք, Բոնա գետի միւս ափով, անցնում են Գաղղիացւոյ լեռները:


Այս երեք շղթաները բաժանում են հարաւ—արևելք վաղող գետերը՝ հիւսիս ու հիւսիս—արևմուտք վաղող գետերից: Հարաւ և հարաւ—արևելք վաղող գետերը սրանք են. Գնեստը և Գունայ՝ թափվում են Սև ծովը, Պօ գետը՝ որ թափվում է Ադրիատիկական ծովը և Բօնա գետը—Վիօնի ծոցը, հիւսիս և հիւսիս—արևմուտք վաղող գետերը սրանք են. Վիսլա և Օդեր գետերը՝ որ թափվում են Բալտիկեան ծովը, Էլբայ և Բէյն գետերը—Հիւսիսային ծովը, Սննա և Լուարա գետերը՝ Ատլանտեան ովկիանոսը:

Այն գետերը, որոնք իրանց սկիզբը ունին Ալպեան կամ Կարպատեան շղթայից՝ աւելի կարճ են Բուսաստանի գետերից և աւելի փոքր տեղ ունին նաւադնացութեան յարմար:

Մենք այստեղ դնում ենք համեմատութեան համար Եւրոպայի գլխաւոր գետերի երկայնութիւնը .

Վօլգա . ունի	3000	վերստ երկայ՝.
Դոնայ .	2500	
Դնեպր	1250	
Դոն	1350	
Էլբա	1080	
Րէին	1050	
Արեւմտեան Դալինա	950	
Լուարա	900	
Վիտա	900	
Նեւա	58	

Եւրոպայի թերակղզիները լեռնոտ են , բայց որովհետեւ փոքր են , այս պատճառաւ նրանք մեծ գետեր չ'ունին : Միայն մէկն է բաւական մեծ , այն է Տաղօ գետը՝ որ Պիրէնեան թերակղզու վերայ է : Միւս թերակղզիների լեռները այսինքն Ասիենեան լեռները (Խտալեայում) , Բալկանեան լեռները (Տաճկաստանում) և Սկանդինավեան (Նորվեգիայում) , — կազմում են շատ կարճ գետեր :



ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԵՒՐՈՊԱ ՔԱՐՏԷԶԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ :

ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ $\left\{ \begin{array}{l} \text{Անդղիա} \\ \text{Շօտլանդիա} \\ \text{Իրլանդիա} \end{array} \right\}$ մայրաքաղաքը Լոնդոն

Դանեմարկա	Մ. Ք.	Կոպենհագ.
Շվեդիա	Մ. Ք.	Ստոքհոլմ
Ռուսաստան	Մ. Ք.	Պետերբուրգ
Ֆրանսիա	Մ. Ք.	Պարիզ
Բելժիա	Մ. Ք.	Բրիսսել
Հոլլանդիա	Մ. Ք.	Հադա
Շվեյցարիա	Մ. Ք.	Բեռն
Ավստրիա	Մ. Ք.	Վենա
Պրուսիա	Մ. Ք.	Բեռլին
Գերմանիա	Մ. Ք.	Ֆրանկֆուրտ
Պորտուգալիա	Մ. Ք.	Լիսբոն
Իսպանիա	Մ. Ք.	Մադրիդ
Իտալիա	Մ. Ք.	Հռոմ
Տաճկաստան	Մ. Ք.	Կոստանդնուպոլիս
Յունաստան	Մ. Ք.	Աթինք

Ափնեայ կղզիները .

Կանդիա
Իօնիկիան
Սիցիլիա
Սարդինիա

Կորսիկա

Բալէարեան

Բրիտանեան

Ջերմանիան

Ռուսիա

Նոր Հող :

Թերակղզիները .

Սկանդինավեան (Շվեդիա եւ Նորվեգիա)

Դրիմ

Մորէա (Յունաստան)

Ապէնեան (Իտալիա)

Պիրէնեան (Իսպանիա եւ Պորտուգալիա)

Բալկանեան (Տէրաքսան)

Իւտալիա (Դալմատիա)

Գլուխները

Նորդկապ

Մատապան

Ֆինիտերբէ

Շղթայ լեռանց .

Սկանդինավեան

Ռուսիան

Կովկասեան

Բալկանեան

Ապէնեան

Պիրէնեան

Ալպեան

Կարպատեան

Ափնեայ Ովկիանոսները .

Հիսթիային

Առլանտեան

Ծովերը .

Ապիտակ

Կասպից

Ազարսու

Սէւ

Մարմարա

Արշակազոս

Միջերկրական

Աղբիտոսիական (Ադրիատիկ)

Բալթիական

Խրանդիացոց

Հիւսիսային (Գերմանիական)

Բալթիկիան.

Ծոցերը .

Տարնտուան

Ղանուայի

Լիօնի

Սլազերբուկ

Բիդայի

Ֆինի

Բոտնիկ

Նեղուցները .

Կոստանդնուպոլիս

Դարդանեւի

Օսրանու

Մէսսինի

Զիրապոսարի

Կալէի

Զունդ

Ջրանցք .

Մանչ և ամ Անգղիացւոց

Լճերը .

Լադոգա

Օնեգա

Գետերը .

Հիւսիսային Դվինա

Պեչորա

Ուրալ

Վօլգա

Դոն

Դնեստր

Դնեպր

Դունայ

Պո

Բոնա

Տալա

Լուարա

Սենա

Բէյն

Էլբա

Օդեր

Վիսլա

Արեւմտեան Դվինա

~~~~~❦~~~~~

## Նկարագրական աշխարհագրութիւն:

Եւրոպան բռնած ունի արեւելեան կիսագնդի հիւսիս — արեւմուտք անկիւնը : Լայնութիւնն է  $36-72^{\circ}$  (զուգահեռական գծերով) . երկայնութիւնը  $8-80^{\circ}$  (միջօրէական գլծերով)  $1^{\circ}$  միջ. գծից արեւելք : Նրա բռնած տեղը հաւասար է  $183,000$  քառասուն միլոնի (1) : Այս բոլոր տեղը պարունակում է իւր մէջ զանազան տէրութիւններ . որոնք բաժանւած են մէկմէկից սահմաններով : Տէրութիւնների հարաբերութիւնները իմանալու համար հարկաւոր է գիտենալ ամէն մէկի տարածութիւնը և սահմանները :

Այս աղիւսակի մէջ նշանակած է ամէն մէկ տէրութեան տարածութիւնը :



| Տէրութիւնները         | մղոն    | Տէրութիւնները                               |
|-----------------------|---------|---------------------------------------------|
| Շվեդիա և Նորվեգիա     | 14,000  | Բելգիա . . . 540                            |
| Ռուսաստան . . .       | 100,000 | Հոլանդիա . . . 670                          |
| Տաճկաստան . . .       | 9,000   | Գերմանիա . . . 11,500                       |
| Յունաստան, Իոնիէն     |         | Այս Բաւի Տէլ Աւստրիայի և Պրուսիայի Տէլ 3,00 |
| Ավստրիա . . . .       | 950     | Դանիմարկա . . . 1,000                       |
| Իտալիա . . . .        | 12,000  | Պրուսիա . . . 5,100                         |
| Ֆրանսիա . . . .       | 5,800   | Շվեյցարիա . . . 750                         |
| Իսպանիա և Պորտուգալիա | 9,600   | Անգլիա . . . 5700                           |
|                       | 10,900  |                                             |

ՌՈՒՍՍԱՍՏԱՆԸ (Եւրոպայի մեծ մասը) բռնած ունի Եւրոպայի մեծ մասը : Ֆրանսուսիոն իւր ՀԵԼՄԵՐԳՅՈՐՍ մայրաքաղաքով և ԼԵՀԱՍՏԱՆԸ իւր ՎԱՐՁՈՎԻ մայրաքաղաքով կազմում են Ռուսաստանի մի մասը :

Այս երկիրը այնքան ընդարձակ է, որ նրա Հիւսիսային մասումը ցուրտ կլիմա է և տաք ուսայ մեծ մասը ձմեռ է, իսկ հարաւային մասումը այնքան տաք է, որ մինչև անգամ հաղորդը հասնում է : Անգլիաները այստեղ հազիւ

են դտնվում, և մասը բաղկանում է արօտա-  
կան (пастбищный) մարգագետիններից (луга), որի  
վերայ կերակրվում են ընտանեկան կենդանի-  
ների սուրունները, ինչպէս ձի, ոչխար, տավար  
և այլն : Ռուսաստանի գլխաւոր հարստութիւնն  
է շինական տնտեսութեան (1) օգուտը (հաց,  
վուշ (2), կանեփ (3), կաշի, ճրագու, բուրդ)  
և լեռնային հանքագործութիւնը (горный промы-  
селъ) (երկաթ, պղինձ, ոսկի, աղ) : Վերոյի-  
շեալ բերքերը տանում են նահանգից գուրս և  
նրանց տեղը ստանում են կամ Եւրոպայից  
գուրս եղած բերքերը (բամբակ, չաքրէ աւազ,  
չայ) կամ հարաւային Եւրոպայի բերքերը (գի-  
նի, քնքոյշ պտուղներ) և կամ գործատանների  
ձեռագործները (4) :

Ռուսաստանը ունի երկու մայրաքաղաք . մէկը  
նոր, Ս . ՊԵՏԵՐԲՈՒՐԳ անունով, միւսը՝ հին՝

(1) Сельское хозяйство.

(2) Ленъ.

(3) Пенька.

(4) Фабричныя издѣлія.



ՄՈՍԿՈՎԱՅ անունով : Առաջինը չստ գեղեցիկ քաղաք է , Ֆիննի ծոցի մօտ , Նեվա գետի վերայ , վաճառաշահ և հարուստ : Մինչև  $\frac{1}{2}$  միլիոն (500,000) բնակիչ ունի : Միւսի մէջ ծաղկած է ներքին վաճառականութիւնը :

ՇՎԵԴԻԱ եւ ՆՈՐՎԵԴԻԱ : Նորվեգիան բռնած ունի Սկանդինավեան թերակղզու արեւմտեան լեռնոտ մասը . նրա մակերեւոյթը ծածկած է խիտ անտառներով : Բնակիչներու գլխաւոր պարապմունքն է հանքագործութիւն (рудное дело), իսկ նրանց ապրուստի միջոցը—ձկնորսութիւն : Մայրաքաղաքն ԽՐԻՍՏԻԱՆՈՒԱ :

Շվեդիան բռնած ունի Սկանդինավեան թերակղզու արեւելեան մասը : Առ հասարակ նրա մակերեւոյթը ուրիշ է այսինքն տափարակ , բացի արեւմտեան սահմանները , հարուստ է գետերով և լճերով : Սրա մայրաքաղաք և միւնիոյն ժամանակ Շվեդիայի և Նորվեգիայի թագաւորանիստ քաղաքն է ՍՏՈԿՀՈԼՄ , Մեծար լճի վերայ :

ՏՍԱԿԱՍՏՈՆ բռնած ունի Բալկանեան թերակղզին , որ թէպէտ բարեխառն և առողջարար

կլիմա ունի, երկիրն էլ շատ արողատու է. բայց բնակիչները շատ ծոյլ լինելով չեն կարողանում օգուտ քաղել և վաճառականութիւն ծաղկեցնել : Մայրաքաղաքն է ԿՈՍՏԱՆԳՆՊՈԼԻՍ :

ՅՈՒՆԱՍՏՈՆ մեծ մասամբ բռնած ունի Մորէա թերակղզին, որ գտնվում է Տաճկաստանից հարաւ : Գեղեցիկ երկիր է սա թէ կլիմայով և թէ դրութիւնով. բայց երկար ժամանակ տեղ տաճկաց տիրապետութիւնը շատ վնաս տուեց այս երկրին : Սա հիմա առանձին տէրութիւն է կազմում և աշխատում է իւր վերքերը առողջացնել : Գլխաւոր քաղաքն է ԱԹԷՆԲ :

ԱՎԱՏՐԻԱ : Սա է բաւական ընդարձակ տէրութիւն, Ալպեան և Կարպատեան չղթանների փեշերքի վերայ, Ադրիատիկական ծովի մօտ : Բնակիչները մասամբ գերմանացիք են և մասամբ Սլավոնացիք : Այս երկիրը հարուստ է անտառներով և հանքային բերքերով, ինչպէս աղ, քարէ ածուխ, պղինձ, սնդիկ, երկաթ, ոսկի : Սրա մայրաքաղաքն է ՎԻՆՆԱ :

ԻՏԱԼԻԱ : Սա բռնած ունի Ապէնեան թե-



բակղզին . փորթոգալ (апелсинъ) , ձիթապտուղ (оливки) , թուղ (вишняя ягода) և զանազան քնքոյշ պտուղներ շատ կայ այստեղ , այնպէս որ բոլոր Եւրոպային բաւականանում է : Արա մայրաքաղաքներն են ՆՈՌՎԻԿ և ՏՈՒՐՆ :

ՅՐԱՆՍԻԱ , Եւրոպայի հինգ ինքնակալ (1) տէրութիւններից մէկն է : Բնակիչների գլխաւոր պարամունքն է հողագործութիւնը և գինեգործութիւնը : Այնպէս այստեղ ծաղկած են մետաքսեայ և բրթէ (шерстяной) գործարանները : Արա մայրաքաղաքն է ՊԱՐԻՅ , որ Լոնդոնից երկրորդ է կոչվում Եւրոպայում մեծութեան համար :

ԻՍՊԱՆԻԱ գտնվում է Ֆրանսիայից հարաւ , Պիրէնիան լեռներից միւս կողմը : Սա Եւրոպայի ամենալեռնոտ մասն է Շվեյցարիայի և Նորվեգիայից յետոյ : Բնակիչները պարապում են հողագործութիւնով և խաշնարածութիւնով : Նշանաւոր են այստեղի մերինոս ա-

---

(1) Ռուսաստան , Ֆրանսիա , Անգլիա , Պրուսիա և Ավստրիա , սրանք կոչվում են ինքնակալ տէրութիւններ :

նունով ոչխարները : Սրա մայրաքաղաքն է  
ՄԱԴՐԻՏ :

ՊՕՐՏՈՒԳԱԼԻԱ , որ փոքրիկ տէրութիւն է , Իսպանիայից արևելմուտք Ատլանտեան ովկիանոսի մօտ : Այստեղ ծաղկած է գինեգործութիւնը : ԼԻՍՐՈՆ է սրա գլխաւոր քաղաքը :

ԲԵԼԳԻԱ : Սա էլ պատիկ տէրութիւն է , գտնվում է Ֆրանսիայից արևելք—Հիւսիս և Պրուսիայից արևմուտք : Երկիրը բերրի է և մըշակված : Սրա մայրաքաղաքն է ԲՐԻՍՍԵԼ :

ԳԵՐՄԱՆԻԱ : Սա բռնած ունի Եւրոպայի կենդրոնական մասը և բաղկացած է շատ տէրութիւններից , սրանցից ամէն մէկը զանազան կառավարութիւն ունի և առանձին մայրաքաղաք , բայց ողջ Գերմանիայի մայրաքաղաքներից գլխաւորը ընդունվում ԳՐԱՆԳՈՒՐՏԸ Մայն գետի վրա :

ԴԱՆԵՄԱՐԳԱՆ բռնած ունի Իւտլանդիա թերակղզին , մօտերքը գտնված կղզիներու հետ միասին : Այս երկիրս շատ—հաւասար տեղ է և թէպէտ կլիման խոնավ , բայց առողջարար է : Սրա մայրաքաղաքն է ԿՈՊԵՆՀԱԳ , Զելանդ կղզ-



դու վերայ :

ՊՐՈԽՍԻՈՆ է գերմանական տէրութիւն միջին Եւրոպայի մէջ և բաժանված է երկու մասը . արևելեան՝ Բէյն գետի մօտ և արևմտեան՝ Էլբայ գետից մինչև Նեման գետի բերանը : Արևելեան Պրուսիայի մի մասը գերմանական դաշնակցութեան մէջ չէ : Բոլոր տէրութեան մայրաքաղաքն է ԲԵՐԼԻՆ, որ գտնվում է արևելեան Պրուսիայի մէջ :

ՀՈՒԼԱՆԴԻԱՆ շատ գործունեայ տէրութիւն է Բել-ջիայից դէպի հիւսիս : Սա շատ ցածր երկիր է և ծովի ափերը ամբարտակներով (пютина) ամրացած : Մայրաքաղաքն է ՀԱԳԱ, Հիւսիսային ծովի ափը :

ՇՎԷԻՅԱՐԻԱՆ Շօտլանդիայի և Իրլանդիայի հետ կամ ինչպէս ասում են Մեծ Բրիտանիան Իրլանդիայի հետ գտնվում է երկու մեծ կղզու վերայ Ատլանդիան օվկիանոսում և բաժանվում է Եւրոպայից միայն փոքրիկ Ալաէի նեղուցով : Թէպէտ այստեղի կլիման խոնավ է և երկինքը միշտ ամպած , բայց այնքան ցուրտ չէ և հիւսիսային Շօտլանդիան ու դաշ-

տերը համարեա ամբողջ տարի կանաչ են : Բացի խաչնարածութիւնը և հողագործութիւնը, որ այստեղ ծաղկած են, Անգղիան հարուստ է քարէ ածուխով, երկաթով և ուրիշ հանքային բերքերով : Անգղիայի հարստութեանն ու փառքին օգնում են նրա համաշխարհական վաճառականութիւնը և անթիւ գործարանները, առաւել բամբկէնի և երկաթեղէնի, որ շատ ծաղկած են : Անչափ շոգենաւները, ջրանցքները և երկաթուղիները, որ կտրատում են երկիրը ամէն կողմ, միջոց են լինում, որ ապրանքը տեղափոխվի շուտ և էժան :

Սրա մայրաքաղաք ԼՈՆԴՈՆԸ աշխարհիս ամենամեծ և վաճառաշահ քաղաք է : Նրա մէջ 3 միլիոնի չափ բնակիչ կայ :

Շօտլանդիայի մայրաքաղաքն է Էդինբուրգ, իսկ Իրլանդիայինը—Դուբլին : Երկուսն էլ նշանաւոր են իրանց վաճառականութիւնով և մեծութիւնով :











